



EUROPEAN COURT OF HUMAN RIGHTS
COUR EUROPÉENNE DES DROITS DE L'HOMME

Ուղեցույց Մարդու իրավունքների եվրոպական
կոնվենցիայի թիվ 1 Արձանագրության 3-րդ հոդվածի
վերաբերյալ

Ազատ ընտրությունների
իրավունք

Թարմացվել է՝ 31 օգոստոսի 2018թ.

Տպագիր կամ էլեկտրոնային (առցանց) հրատարակության տեսքով սույն զեկույցի ամբողջ կամ մասնակի թարգմանությունը և (կամ) վերարտադրումն իրականացնելու ցանկություն ունեցող հրատարակիչները կամ կազմակերպություններն արտոնման պայմաններին ծանոթանալու համար կարող են դիմել հետևյալ հասցեով՝ publishing@echr.coe.int:

Ընթացիկ թարգմանությունների վերաբերյալ ցանկացած տեղեկություն ստանալու համար խնդրում ենք ծանոթանալ «Ընթացիկ թարգմանություններ» փաստաթղթին:

Սույն ուղեցույցը պատրաստվել է Իրավաբանական խորհրդատվության վարչության կողմից և պարտադրող չէ Դատարանի համար: Դրանում կարող են մտցվել ձևաբանական շտկումներ:

Սույն ուղեցույցն առաջին անգամ հրատարակվել է 2016 թվականին և պարբերաբար թարմացվում է նախադեպային իրավունքի զարգացմանը զուգահեռ: Ուղեցույցի ներկայացվող թարմացման որոշումը կայացվել է 2018 թվականի օգոստոսի 31-ին:

Նախադեպային իրավունքին նվիրված ուղեցույցները կարելի է ներբեռնվել այստեղից՝ www.echr.coe.int (Նախադեպային իրավունք – Իրավաբանական վերլուծություն – Նախադեպային իրավունքին նվիրված ուղեցույցներ): Հրատարակումների մասին վերջին նորություններին ծանոթանալու համար կարող եք այցելել Դատարանի «Twitter»-ի էջը հետևյալ հասցեով՝ <https://twitter.com/echrpublication>.

© Հեղինակային իրավունք՝ Եվրոպայի խորհուրդ, Մարդու իրավունքների Եվրոպական դատարան, 2018թ.

Բովանդակություն

Նախաբան	4
I. Ընդհանուր սկզբունքներ	6
Ա. Իմաստ և տարածման տիրույթ	6
Բ. Մեկնաբանության սկզբունքներ	8
II. Ակտիվ հայեցակետ՝ քվեարկության իրավունք	10
Ա. Զրկում քաղաքացիական իրավունքներից	11
Բ. Ազատագրված անձանց առանձին դեպքեր	12
Գ. Բնակություն՝ որպես քվեարկելու իրավունքի հասանելիության պայման	14
1. Տվյալ տարածքում չբնակվող քաղաքացիների քվեարկություն	14
2. Որոշ տարածքների առանձին դեպքեր	16
3. Ոչ ռեզիդենտ անձանց համար քվեարկության կազմակերպման նյութական հայեցակետ	17
III. Պասիվ հայեցակետ՝ ընտրություններին որպես թեկնածու առաջադրվելու իրավունք	18
Ա. Որպես թեկնածու առաջադրվելու հնարավորության բացակայություն և ժողովրդավարական կարգ	20
Բ. Պատմական համատեքստի կարևորություն	21
Գ. Ընտրությունների կազմակերպում	22
1. Թեկնածուների լուրջ մտադրությունների երաշխիք՝ ընտրական երաշխիքի կանոնը	23
2. Խուսափում քաղաքական դաշտի ավելորդ մասնատումից	24
Դ. Այլ օրինական նպատակներ	27
Ե. Ընտրարշավի վերաբերյալ	30
Զ. Մանդատի իրացում	32
IV. Քվեարկության արդյունքների մշակում	34
V. Ընտրության արդյունքների վիճարկում	36
Մեջբերվող գործերի ցանկեր	40

Նախարան

Սույն ուղեցույցը պատկանում է Մարդու իրավունքների եվրոպական դատարանի (այսուհետև՝ «Դատարան», «Եվրոպական դատարան» կամ «Մտրասբուրգի դատարան») կողմից հրապարակված նախադեպային իրավունքի ուղեցույցների շարքին, որը կոչված է տեղեկացնել իրավագիտությանը զբաղվող մասնագետներին վերջինիս կողմից կայացված հիմնարար վճիռների և որոշումների մասին: Տվյալ դեպքում սույն ուղեցույցը վերլուծում և ամփոփում է Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի (այսուհետև՝ «Կոնվենցիա» կամ «Եվրոպական կոնվենցիա») թիվ 1 արձանագրության 3-րդ հոդվածին առնչվող նախադեպային իրավունքը՝ 2018 թվականի օգոստոսի 31-ի դրությամբ: Ընթերցողն այստեղ կգտնի տվյալ հարցի շուրջ մշակված հիմնական սկզբունքները և համապատասխան նախադեպերը:

Ընտրված նախադեպային իրավունքը ներառում է սկզբունքային վճիռներ և որոշումներ, որոնք կարևոր են կամ վերջերս են կայացվել:*

Դատարանի վճիռներն ու որոշումները անդրադառնում են ոչ միայն իր վարույթում գտնվող գործերին, այլև ավելի լայն իմաստով ծառայում են Կոնվենցիայով սահմանված նորմերի պարզաբանման, երաշխավորման և զարգացման համար՝ դրանով իսկ նպաստելով պետությունների կողմից որպես պայմանավորվող պետությունների ստանձնած պարտավորությունների կատարմանը (*«Իռլանդիան ընդդեմ Միացյալ Թագավորության»*, 18 հունվարի 1978թ., § 154, սերիա Ա, թիվ 25 և վերջերս՝ *«Յերոնովիչս ընդդեմ Լատվիայի»* [ՄՊ], թիվ 44898/10, § 109, ՄԻԵԴ, 2016թ.):

Այսպիսով, Կոնվենցիայի ներքո ստեղծված համակարգը կոչված է հանրային շահերից ելնելով անդրադառնալ հասարակական կարգին վերաբերող հարցերին՝ բարձրացնելով մարդու իրավունքների պաշտպանության չափանիշները և ընդլայնելով տվյալ ոլորտում ձևավորված նախադեպային իրավունքը Կոնվենցիային անդամակցող բոլոր պետություններում (*«Կոնստանտին Մարկինն ընդդեմ Ռուսաստանի»* [ՄՊ], թիվ 30078/06, § 89, ՄԻԵԴ 2012): Եվ իսկապես, Դատարանը ընդգծել է որպես «եվրոպական հասարակական կարգի սահմանադրական գործիքի» Մարդու իրավունքների ոլորտում Կոնվենցիայի դերակատարումը (*«Բոսնիայի ավիատղիների գրոսաշրջության և առևտրի գործակալությունն ընդդեմ Իռլանդիայի»* [ՄՊ], թիվ 45036/98, § 156, ՄԻԵԴ 2005-VI):

Սույն ուղեցույցն ընդգրկում է հղումներ ըստ առանցքային բառերի՝ Կոնվենցիայի և դրա լրացուցիչ արձանագրությունների յուրաքանչյուր հոդվածի մասով: Յուրաքանչյուր գործի շրջանակներում արժարժվող իրավաբանական հարցերն ամփոփված են [առանցքային բառերի ցանկում](#), որը (մեծամասամբ) հիմնված է Կոնվենցիայի և դրա արձանագրությունների տեքստից անմիջապես վերցված եզրույթների բառացանկի վրա:

Դատարանի նախադեպային իրավունքի «HUDOC» [տվյալների շտեմարանը](#) թույլ է տալիս որոնում կատարել ըստ առանցքային բառերի: Այսպիսով, ըստ առանցքային բառերի որոնումը Ձեզ թույլ կտա գտնել մի խումբ փաստաթղթեր, որոնք պարունակում են նմանատիպ իրավագիտական նյութեր (Դատարանի պատճառաբանությունը և եզրակացությունները յուրաքանչյուր գործով ամփոփված են ըստ առանցքային բառերի): Յուրաքանչյուր գործի առանցքային բառերը կարելի է գտնել տվյալ փաստաթղթի մանրամասների թերթիկում: Բոլոր անհրաժեշտ պարզաբանումները կարելի է գտնել [«HUDOC» համակարգի օգտագործման ձեռնարկում](#):

* Մեջբերվող նախադեպային իրավունքը կարող է ներկայացվել Դատարանի և Մարդու իրավունքների եվրոպական հանձնաժողովի պաշտոնական լեզուներից (ֆրանսերեն կամ անգլերեն) մեկով: Եթե գործի անվանումից հետո այլ նշում չի կատարվում, ապա մեջբերումը վերաբերում է Դատարանի որևէ պալատի կողմից ըստ էության կայացված վճռին: Եթե բերվում է «(որոշ.)» նշումը, ապա այն հղում է կատարում Դատարանի որոշմանը, իսկ «[ՄՊ]» հապավումը նշանակում է, որ գործը քննվել է Մեծ պալատի կողմից: Սույն թարմացված հրապարակման դրությամբ պալատի ոչ վերջնական վճիռները նշված են աստղանիշով (*):

I. Ընդհանուր սկզբունքներ

Թիվ 1 արձանագրության 3-րդ հոդված (ազատ ընտրությունների իրավունք)

«Բարձր պայմանավորվող կողմերը պարտավորվում են անցկացնել ազատ ընտրություններ՝ ողջամիտ պարբերականությամբ, գաղտնի քվեարկությամբ, այնպիսի պայմաններում, որոնք կապահովեն ժողովրդի կամքի ազատ արտահայտումն օրենսդիր իշխանություն ընտրելիս»:

«HUDOC» համակարգի առանցքային բառեր

Ազատ ընտրությունների իրավունք – Պարբերական ընտրություններ (P1-3) – Ընտրություններ գաղտնի քվեարկությամբ (P1-3) – Ժողովրդի կամքի ազատ արտահայտում (P1-3) – Օրենսդիր իշխանության ընտրություն (P1-3) – Քվեարկություն (P1-3) – Որպես թեկնածու առաջադրվել ընտրություններին (P1-3)

Ա. Իմաստ և տարածման տիրույթ

1. «Կոնվենցիայի նախաբանի համաձայն՝ հիմնարար ազատությունների պահպանումը «հիմնված է ըստ էության իսկապես ժողովրդավարական քաղաքական վարչակարգի վրա»: Հանդես գալով որպես նման վարչակարգի հատկանշական սկզբունք՝ թիվ 1 արձանագրության 3-րդ հոդվածը Կոնվենցիայի համակարգում օժտված է առանցքային կարևորությամբ: » (*«Մայթո-Մոհինը և Քլերֆայթն ընդդեմ Բելգիայի»*, § 47)

2. Թիվ 1 արձանագրության 3-րդ հոդվածը վերաբերում է միայն օրենսդիր իշխանության ընտրությանը: Այդուհանդերձ, այս արտահայտությունը չի ընդգրկում միայն ազգային խորհրդարանը: Հարկ է քննության առնել տվյալ պետության սահմանադրական կառույցը (*«Թիմկեն ընդդեմ Գերմանիայի»*, հանձնաժողովի որոշում): Ընդհանուր առմամբ, թիվ 1 Արձանագրության 3-րդ հոդվածի կիրառման ոլորտը չի ընդգրկում տեղական ընտրությունները՝ համայնքային (*«Քսերերը ընդդեմ Մայթայի»* «*Մայերաս Յինարենս ընդդեմ Իսպանիայի»*), թե տարածաշրջանային մակարդակով (*«Մալարդն ընդդեմ Տրանսիլիայի»*): Եվ իսկապես, Դատարանը վճռել է, որ կանոնակարգեր սահմանելու և վարչական ակտեր ընդունելու լիազորությունը, որը շատ երկրներում վերապահված է տեղական ինքնակառավարման մարմիններին, տարբերվում է թիվ 1 Արձանագրության 3-րդ հոդվածի առարկա հանդիսացող օրենսդիր իշխանությունից, նույնիսկ եթե վերջինս անհրաժեշտաբար չի ընկալվում որպես ազգային խորհրդարաններին բացառապես վերապահված լիազորություն (*«Մուլկան ընդդեմ Լեհաստանի»* (որոշ.)):

3. Դատարանը հստակեցրել է «ընտրություններ» հասկացության մեկնաբանությունը, ըստ որի սահմանվում է թիվ 1 Արձանագրության 3-րդ հոդվածի կիրառման ոլորտը (*«Ժողովրդահանրապետական կուսակցությունն ընդդեմ Թուրքիայի»* (որոշ.), §§ 33-34 և 37-38):

4. Դատարանը սահմանել է, որ սկզբունքորեն հանրաքվեն չի մտնում թիվ 1 արձանագրության 3-րդ հոդվածի կիրառման ոլորտի շրջանակներում (*նույն տեղում*, §§ 33 և 38, *«Մուհան և Գիլլոն ընդդեմ Միացյալ Թագավորության»* (որոշ.), § 40): Այդուհանդերձ, դատարանը հաշվի է առել տարբեր երկրներում գործող օրենսդրական համակարգերի բազմազանությունը: Դատարանը չի բացառել այն հնարավորությունը, որ որպես «հանրաքվե» բնութագրվող ժողովրդավարական գործընթացը որևէ պետությունում կարող

Ուղեցույց թիվ 1 արձանագրության 3-րդ հոդվածի վերաբերյալ (ազատ ընտրությունների իրավունք)

է վերջին հաշվով ընդգրկվել թիվ 1 արձանագրության 3-րդ հոդվածի կիրառման ոլորտի շրջանակներում: Այս ապահովելու համար հարկավոր է, որ համապատասխան գործընթացը կազմակերպված լինի «ողջամիտ պարբերականությամբ, գաղտնի քվեարկությամբ, այնպիսի պայմաններում, որոնք կապահովեն ժողովրդի կամքի ազատ արտահայտումն օրենսդիր իշխանություն ընտրելիս» (*նույն տեղում*, § 42):

5. Դատարանը նշել է, որ ընտրություններին նախորդող տասնհինգ օրվա ժամանակահատվածում քվեարկության մտադրությունների վերաբերյալ հանրային կարծիքի հարցումների արդյունքները ստանալու անհնարությունը չի անդրադարձել ընտրողների կարգավիճակում դիմումատուների վրա բավականին անմիջական եղանակով, որպեսզի վերջիններս կարողանան պնդել, որ տուժել են թիվ 1 արձանագրության 3-րդ հոդվածի խախտումից կոնվենցիայի 34-րդ հոդվածի իմաստով (*«Դիմիտրասը և այլք ընդդեմ Հունաստանի»* (որոշ.), §§ 30-32):

6. Նախագահական ընտրությունների առնչությամբ Դատարանը համարել է, որ երկրի ղեկավարի լիազորությունները որպես այդպիսիք չեն կարող բերել նրան, որ վերջինս դիտարկվի որպես «օրենսդիր իշխանություն» թիվ 1 արձանագրության 3-րդ հոդվածի իմաստով: Այնուամենայնիվ, Դատարանը չի բացառում թիվ 1 արձանագրության 3-րդ հոդվածի կիրառումը նախագահական ընտրությունների շրջանակներում: Եթե հաստատվի, որ պետության ղեկավարի գործառույթներն ընդգրկում են օրենսդրական նախաձեռնություններ և օրենքներ ընդունելու լիազորություններ, ինչպես նաև ներառում են օրենքների ընդունման վերահսկողության հարցում լայն լիազորություններ, կամ հիմնական օրենսդիր մարմինները գրաքննության ենթարկելու լիազորություններ, ապա հնարավոր կլինի պնդել, որ երկրի ղեկավարը հանդես է գալիս որպես «օրենսդիր իշխանություն» թիվ 1 արձանագրության 3-րդ հոդվածի իմաստով (*Բոշկոսկին ընդդեմ նախկին Հարավսլավիայի Մակեդոնիայի Հանրապետության* (որոշ.) *«Բրիտո Դա Միլվա Գուեռան և Սոսա Մագնոն ընդդեմ Պորտուգալիայի»* (որոշ.)): Այդուհանդերձ, այդ հնարավորությունը դեռևս չի օգտագործվել և նույնիսկ չի վկայակոչվել ավելի ուշ քննված գործերի շրջանակներում (*Պաքսասն ընդդեմ Լիտվայի* [ՄՊ], *«Անչուգովը և Գլադկովն ընդդեմ Ռուսաստանի»*, §§ 55-56):

7. Փոխարենը՝ Դատարանը բազմիցս գտել է, որ Եվրոպական խորհրդարանը կազմում է օրենսդիր իշխանության մաս թիվ 1 արձանագրության 3-րդ հոդվածի իմաստով (*«Մեթյունն ընդդեմ Միացյալ Թագավորության»* [ՄՊ], §§ 45-54, *«Օկետոնն ընդդեմ Բտալիայի»* (որոշ.), § 42):

8. Ինչ վերաբերում է քվեարկության բուն հատկանիշներին, ապա թիվ 1 արձանագրության 3-րդ հոդվածի տեքստը նախատեսում է միայն դրա ազատ և գաղտնի բնույթը, ինչը Մարդու իրավունքների հարցերով եվրոպական հանձնաժողովը (այսուհետև՝ Հանձնաժողով), իսկ հետագայում Դատարանը շարունակաբար վերահաստատել են (*«Իքս-ն ընդդեմ Միացյալ Թագավորության»*, հանձնաժողովի որոշում, 6 հոկտեմբերի 1976թ.): Բացի այդ, նշվում է, որ ընտրությունները պետք է անցկացվեն ողջամիտ պարբերականությամբ: Այս հարցում պետություններին տրվում է սեփական հայեցողությամբ որոշում կայացնելու լայն լուսանցք: Այդուհանդերձ, նախադեպային իրավունքն անդրադառնում է ղեկավար սկզբունքներին:

«Խորհրդարանական ընտրությունների միջև ընկած ընդմիջումների պարբերական բնույթը պետք է դիտարկվի այդ ընտրությունների առարկայի լույսի ներքո, այսինքն՝ պետք է երաշխավորի, որ ժողովրդի ներկայացուցիչների գաղափարներն արտացոլեն գերակայող հանրային կարծիքի հիմնարար զարգացումները: Սկզբունքորեն, խորհրդարանը պետք է ի վիճակի լինի մշակել և ի կատար ածել օրենսդրական ծրագրեր, այդ թվում՝ երկարաժամկետ

Ուղեցույց թիվ 1 արձանագրության 3-րդ հոդվածի վերաբերյալ (ազատ ընտրությունների իրավունք)

նախագծեր: Ընտրությունների միջև չափազանց կարճ ընդմիջումները կարող են խոչընդոտել ընտրազանգվածի կամքն ի կատար ածելուն ուղղված քաղաքական ռազմավարությունները: Իսկ չափազանց երկար ընդմիջումները կարող են հանգեցնել թարմացման բացակայությանը խորհրդարանական ներկայացուցչության կազմում, ինչը կարող է ժամանակի ընթացքում այլևս չհամապատասխանել ընտրողների գերակշռող ձգտումներին»: (*«Թիմկեն ընդդեմ Գերմանիայի»*, հանձնաժողովի որոշում)

9. Այնուհետև, նախադեպային իրավունքի շրջանակներում ձևավորվել է քվեարկության համընդհանուր սկզբունքի պահանջը, որն այսուհետ դարձել է ելակետային սկզբունք (*«Իքս-ն ընդդեմ Գերմանիայի»*, Հանձնաժողովի որոշում, *«Հիրսթն ընդդեմ Միացյալ Թագավորության»* (թիվ 2) [ՄՊ], § 59 և 62, *«Մաթյո-Մոհինը և Քլերֆայթն ընդդեմ Բելգիայի»*, § 51): Փոխարենը՝ եթե թիվ 1 արձանագրության 3-րդ հոդվածը չի ենթադրում բոլոր քաղաքացիների ընտրելու իրավունքի իրացման նկատմամբ հավասար վերաբերմունքի սկզբունք, ապա դրանից, այնուամենայնիվ, չի բխում, որ բոլոր քվեաթերթիկները պետք է ունենան հավասար կշիռ վերջնական արդյունքների համար: Այսպիսով, ոչ մի համակարգ չի կարող խուսափել «կորցրած ձայների» երևույթից (*նույն տեղում*, § 54, *«Նոր դեմոկրատներ» կուսակցությունը և «Մեր հող» կուսակցությունը ընդդեմ Լատվիայի»* (որոշ.)):

10. Այդուհանդերձ, յուրաքանչյուր քվեարկող պետք է հնարավորություն ունենա տեսնել, թե ինչպես է նրա քվեն անդրադառնում օրենսդիր իշխանության կազմավորման վրա, հակառակ դեպքում՝ քվեարկելու իրավունքի, ընտրական գործընթացի և վերջին հաշվով բուն ժողովրդավարական կարգի բովանդակությունը կիմաստագրկվի (*«Ռիզան և այլք ընդդեմ Բուլղարիայի»*, § 148): Ուստի, քվեարկության կազմակերպման տեսակն ընտրելու հարցում պետություններն օժտված են սեփական հայեցողության լայն լուսանցքով: Այսպիսով, բնակչության առումով ընտրատարածքների անհավասար բաշխումը չի ենթադրում թիվ 1 արձանագրության 3-րդ հոդվածի խախտում պայմանով, որ դա չի անդրադառնա ժողովրդի կամքի արտահայտման ճշգրտության վրա (*«Բոմբարդն ընդդեմ Տրանսիայի»* (որոշ.))): Եվ վերջապես, քվեարկության կարգի ընտրությունը, որով ապահովվում է համամասնական ներկայացուցչության, մեծամասնական և այլ ընտրակարգով օրենսդիր իշխանության ընտրության հարցում ժողովրդի կամքի ազատ արտահայտումը, իրենից ներկայացնում է մի հարց, որում յուրաքանչյուր պետությունն օգտվում է սեփական հայեցողության լայն լուսանցքից (*«Մեթյունն ընդդեմ Միացյալ Թագավորության»* [ՄՊ], § 64):

Բ. Մեկնաբանության սկզբունքներ

11. Թիվ 1 արձանագրության 3-րդ հոդվածը չի տարբերվում է Կոնվենցիայի և դրա Արձանագրությունների այլ իրավունքներ երաշխավորող դրույթներից այն իմաստով, որ սահմանում է անդամ-պետությունների համար ընտրություններն այնպիսի պայմաններում կազմակերպելու պարտավորություն, որոնք կապահովեն ժողովրդի կամքի ազատ արտահայտումը, այլ ոչ թե որևէ առանձին իրավունք կամ ազատություն: Այնուամենայնիվ, հաշվի առնելով թիվ 1 արձանագրության 3-րդ հոդվածի նախապատրաստական աշխատանքները և ողջ Կոնվենցիայի շրջանակներում այս դրույթին տրվող մեկնաբանությունը՝ Դատարանը եզրակացրել է, որ տվյալ հոդվածը ենթադրում է նաև սուբյեկտիվ իրավունքներ, որոնցից է քվեարկելու իրավունքը («ակտիվ» հայեցակետ) և ընտրություններին որպես թեկնածու առաջադրվելու իրավունքը («պասիվ» հայեցակետ) (*«Մաթյո-Մոհինը և Քլերֆայթն ընդդեմ Բելգիայի»*, §§ 48-51, *«Ժդանկան ընդդեմ Լատվիայի»* [ՄՊ], § 102):

12. Խնդրո առարկա իրավունքները բացարձակ չեն: Տեղին են որոշակի «ենթադրյալ սահմանափակումներ», ընդ որում՝ պայմանավորվող պետություններն այս հարցում պետք է ստանան սեփական հայեցողության լուսանցք: «Ենթադրյալ սահմանափակում» գաղափարը, որը բխում է թիվ 1 արձանագրության 3-րդ հոդվածից, օժտված է մեծ կարևորությամբ, քանի որ խոսքը գնում է տվյալ դրույթի շրջանակներում երաշխավորված իրավունքների վրա դրված սահմանափակումների նպատակների օրինականությունը որոշելու մասին: Հաշվի առնելով, որ թիվ 1 արձանագրության 3-րդ հոդվածը չի սահմանափակվում «օրինական նպատակների» որևէ հստակ ցանկով, որպիսիք թվարկված են Կոնվենցիայի 8-ից 11-րդ հոդվածներում, ուստի պայմանավորվող պետությունները կարող են հիմնվել մի նպատակի վրա, որը ներկայացված չէ հիշյալ ցուցակում որևէ սահմանափակում հիմնավորելու համար, պայմանով, որ տվյալ նպատակը համապատասխանի օրենքի գերակայության սկզբունքին և Կոնվենցիայի ընդհանուր նպատակներին, ինչը պետք է ցուցադրված լինի տվյալ գործի մասնավոր հանգամանքներում:

13. «Ենթադրյալ սահմանափակում» գաղափարը նշանակում է նաև, որ Դատարանը չի կիրառում «անհրաժեշտության» և «հրամայական հասարակական պահանջի» ավանդական չափորոշիչները, որոնք օգտագործվում են կոնվենցիայի 8-ից 11-րդ հոդվածների շրջանակներում: Երբ Դատարանը քննում է թիվ 1 արձանագրության 3-րդ հոդվածի դրույթներին համապատասխանության հարցերը, այն ըստ էության առաջնորդվում է երկու չափորոշիչով, այն է՝ Դատարանը քննում է մի կողմից այն հարցը, թե արդյոք առկա է կամայական վերաբերմունք կամ համամասնության բացակայություն, իսկ մյուս կողմից՝ թե արդյոք դրված սահմանափակումը ոտնձգություն է կազմում ժողովրդի կամքի ազատ արտահայտման նկատմամբ: Ավելին, Դատարանն ընդգծում է ընտրական օրենսդրության ցանկացած նորմ տվյալ երկրի քաղաքական զարգացումների լույսի ներքո դիտարկելու անհրաժեշտությունը, ինչը ենթադրում է, որ որևէ համակարգում առկա անընդունելի հասկանիչները կարող են արդարացված համարվել մեկ այլ համատեքստում (*«Մաթյո-Սոհինը և Քլերֆայթն ընդդեմ Բելգիայի»*, § 52, *«Շդանոկան ընդդեմ Լատվիայի»* [ՄՊ], §§ 103-104 և 115):

14. Խորհրդարանական ընտրություններին առաջադրվելու իրավունքը («պասիվ» հայեցակետ) կարող է ամրագրված լինել ավելի խիստ պահանջներով, քան քվեարկելու իրավունքը («ակտիվ» հայեցակետ): Թեև թիվ 1 արձանագրության 3-րդ հոդվածի «ակտիվ» հայեցակետի հետ կապված չափորոշիչը սովորաբար ենթադրում է այն օրենսդրական դրույթների համամասնության գնահատման ավելի լայն հայեցողություն, որոնցով անձը կամ անձանց մի խումբ զրկվում է քվեարկելու իրավունքից, սակայն «պասիվ» հայեցակետի առնչությամբ ընդունված գործելակերպը հիմնականում սահմանափակվում է նրանով, որ ստուգում է կամայականության բացակայությունը ներպետական այն ընթացակարգերում, որոնք հանգեցնում են անձին ընտրվելու իրավունքից զրկելուն (*Շդանոկան ընդդեմ Լատվիայի* [ՄՊ], § 115, *«Մելնիչենկոն ընդդեմ Ուկրաինայի»*, § 57):

15. Պատասխանելով այն հարցին, թե ով կարող է հավակնել նման «պասիվ» հայեցակետի խախտումից տուժած լինելուն, Դատարանը ընդունել է, որ երբ ընտրական օրենսդրությունը կամ ազգային մարմինների կողմից ընդունված միջոցները սահմանափակում են որևէ կուսակցության ցանկում ընտրություններին առաջադրվելու առանձին թեկնածուների իրավունքը, համապատասխան կուսակցությունը կարող է տվյալ կարգավիճակում պնդել, որ տուժել է թիվ 1 արձանագրության 3-րդ հոդվածի խախտումից՝ իր թեկնածուներից անկախ (*«Վրաստանի աշխատավոր կուսակցությունն ընդդեմ Վրաստանի»*, §§ 72-74, *«Ռիզան և այլք ընդդեմ Բուլղարիայի»*, § 142):

16. Բացի այդ, երբ Դատարանը քննության է առնում որևէ երկրի ընտրական համակարգը՝ ակտիվ, թե պասիվ հայեցակետի մասով, այն հաշվի է առնում պետությունների պատմական համատեքստերի բազմազանությունը: Այսպիսով, նման տարբեր համատեքստերը կարող են հանգեցնել նրան, որ ընդունվեն տարբեր երկրներում եղած ընտրական իրավունքի հարցերում եղած տարաձայնությունները, ինչպես նաև կարող են բացատրել դիտարկվող ժամանակահատվածներում պահանջների զարգացումը:

17. Եվ վերջապես, թիվ 1 արձանագրության 3-րդ հոդվածն անդրադառնում է քվեարկությանը հաջորդող փուլերին, որոնցից են ձայների հաշվարկը, քվեարկության արդյունքների գրանցումը և փոխանցումը: Նշվածից համապատասխան պետության համար բխում է դրական պարտավորություն հստակ ամրագրել այն ընթացակարգերը, որոնցով պետք է հավաքագրվեն, հաշվարկվեն և գրանցվեն քվեարկության արդյունքները (*«Դավիդովը և այլք ընդդեմ Ռուսաստանի»*, §§ 284-285):

II. Ակտիվ հայեցակետ՝ քվեարկության իրավունք

18. «Ակտիվ» հայեցակետը ենթակա է որոշ սահմանափակումների: Այստեղ, ինչպես թիվ 1 արձանագրության 3-րդ հոդվածին վերաբերվող ցանկացած այլ ոլորտում, անդամ պետություններն օգտվում են սեփական հայեցողության լուսանցքից, որը տարբեր է կախված համատեքստից: Օրինակ, հնարավոր է ամրագրել, որոշակի նվազագույն տարիք՝ նպատակ ունենալով ապահովել ընտրական գործընթացին բավականաչափ հասուն անձանց մասնակցությունը (*«Հիբսթն ընդդեմ Միացյալ Թագավորության»* (թիվ 2) [ՄՊ], § 62):

19. Այնուամենայնիվ, իրականացված վերահսկողությունն իրենից ներկայացնում է համամասնության համեմատաբար խորացված ստուգում: Պետություններին վերապահված սեփական հայեցողության լուսանցքը չի կարող բերել նրան, որ որոշ անձանց կամ խմբերին արգելվի մասնակցել երկրի քաղաքական կյանքին, մասնավորապես՝ օրենսդիր իշխանության անդամների նշանակման միջոցով (*«Ազիզն ընդդեմ Կիպրոսի»*, § 28, *«Տանասեն ընդդեմ Մոլդովայի»* [ՄՊ], § 158): *«Ազիզն ընդդեմ Կիպրոսի»* գործում Դատարանն արտահայտվել է խորհրդարանական ընտրություններին Կիպրոսի թուրքական համայնքի անդամների վրա դրված քվեարկելու արգելքի վերաբերյալ: Դատարանը համարել է, որ հաշվի առնելով 1963 թվականից Կիպրոսում գոյություն ունեցող արտասովոր իրավիճակը և օրենսդրական բացը՝ դիմումատուն՝ որպես Կիպրոսի Հանրապետությունում բնակվող Կիպրոսի թուրքական համայնքի անդամ, զրկված է եղել իր կարծիքը ներկայացուցիչների պալատի անդամների ընտրության շրջանակներում արտահայտելու ամեն հնարավորությունից: Հետևաբար, նրա իրավունքի բնույթն ըստ էության խախտվել է: Դատարանը նաև գտել է, որ Կիպրոսի թուրք և հույն համայնքների անդամների կողմից քվեարկելու իրավունքի իրացման հարցում դիտվել է ակնհայտորեն անհավասար վերաբերմունք: Հետևաբար, Դատարանը եզրակացրել է, որ տեղի է ունեցել թիվ 1 արձանագրության 3-րդ հոդվածի խախտում՝ առանձին վերցված և Կոնվենցիայի 14-րդ հոդվածի հետ համադրությամբ:

20. Մյուս կողմից՝ հարկ է նշել, որ թիվ 1 արձանագրության 3-րդ հոդվածի կիրառման ոլորտի շրջանակներից դուրս գտնվող ընտրությունների հետ կապված բողոքները կարող են հարկ եղած դեպքում քննվել Կոնվենցիայի այլ հոդվածների դրույթների ներքո: Այսպիսով, *«Մուլկան ընդդեմ Լեհաստանի»* գործում դիմումատուն հնարավորություն չի ունեցել քվեարկել համայնքային խորհուրդների, տարածքային խորհուրդների և

տարածաշրջանային ժողովների ընտրություններին: Ընտրատեղամասը հասանելի չի եղել հիվանդասայլակով տեղափոխվող անձանց համար, ընդ որում չի թույլատրվել ընտրատեղամասի տարածքից դուրս հանել քվեաթերթիկը: Դատարանը գտել է, որ չի կարելի բացառել այն հանգամանքը, որ ակտիվ կյանք վարելու ցանկություն ունեցող դիմումատուի համար ընտրատեղամասի պատշաճ հասանելիության ապահովմանն ուղղված կազմակերպչական գործողությունների բացակայությունը կարող էր առաջացնել ստորացման և ընկճման զգացումներ և անդրադառնալ շահագրգիռ անձի անձնական անկախության վրա՝ դրանով իսկ ազդելով նրա անձնական կյանքի որակի վրա: Հետևաբար, Դատարանը ընդունեց այն վարկածը, որ տվյալ հանգամանքներում պետք է արձարծվի 8-րդ հոդվածը:

Ա. Զրկում քաղաքացիական իրավունքներից

21. Երբ խոսքը գնում է որևէ անձին կամ անձանց խմբին քվեարկելու իրավունքից զրկելու մասին, Դատարանը դրսևորում է առանձնակի ուշադրություն: Քվեարկելու իրավունքից զրկելը պետք է հետապնդի օրինական նպատակ՝ միաժամանակ համապատասխանելով համամասնության խիստ պահանջներին: Այսպիսով, Դատարանը քննության է առել բազմաթիվ գործեր, որոնց շրջանակներում քվեարկության իրավունքից զրկումը պետք է դիտարկվեր քրեական քննության շրջանակներում: «*Հարիտան ընդդեմ Բտայիայի*» [ՄՊ] գործի շրջանակներում խոսքը գնում էր ավտոմատ կերպով քաղաքացիական իրավունքներից զրկելու մասին՝ մաֆիային պատկանելության վերաբերյալ կասկածի առկայության դեպքում: Դատարանն ընդունել է, որ նման միջոցառումը հետապնդում էր օրինական նպատակ: Այդուհանդերձ, հաշվի առնելով, որ տվյալ միջոցը կիրառվել է դիմումատուի արդարացումից հետո, Դատարանը գտել է, որ գոյություն չի ունեցել որևէ հստակ տարր, որը թույլ կտար կասկածել պատկանելիությունը մաֆիային, և հետևաբար վիճահարույց միջոցը եղել է անհամամասն: «*Վիտո Սանտե Սանտորոն ընդդեմ Բտայիայի*» գործով դիմումատուն նույնպես զրկվել է քվեարկելու իր իրավունքից անորոշ ժամկետով, քանի որ հայտնվել է ոստիկանական վերահսկողության տակ: Այդուհանդերձ, հսկողության տակ դրվելու կարգադրությունից մինչև ընտրողների ցուցակից հեռացումն անցել է ավելի քան 9 ամիս: Այս հանգամանքի բերումով՝ դիմումատուն հնարավորություն չի ունեցել քվեարկել երկու ընտրություններին, ինչը չէր պատահի եթե տվյալ միջոցը կիրառվեր անմիջապես: Ընդ որում, կառավարությունը որևէ պատճառաբանում չի բերել տվյալ հետաձգումն արդարացնելու համար: Հետևաբար, Դատարանը եզրակացրել է, որ տեղի է ունեցել թիվ 1 արձանագրության 3-րդ հոդվածի խախտում:

22. Քաղաքացիական իրավունքներից զրկելու հարցը առաջ է գալիս ոչ միայն քրեական համատեքստում: «*Ալբանեզեն ընդդեմ Բտայիայի*» գործում քննության առարկա էր դարձել դիմումատուի ընտրական իրավունքների իրացումն իր նկատմամբ մեկնարկած սնանկացման գործընթացի ողջ տևողության ժամանակ: Դատարանն ընդգծել է, որ սնանկացման ընթացակարգը գտնվում էր ոչ միայն քրեական, այլև քաղաքացիական իրավունքի ոլորտում և չէր ենթադրում սնանկացված անձի կողմից որևէ խարդախության կամ խաբեության դրսևորում: Հետևաբար, վերջինիս ընտրական իրավունքների սահմանափակումը հետապնդել է ըստ էության պատժելու նպատակ: Հետևաբար, նման սահմանափակման միակ նպատակը եղել է սնանկացած անձի նսեմացումը՝ հանդես գալով որպես բարոյական մեղադրանք, որը պայմանավորված էր անվճարունակ լինելու միակ հանգամանքով և կախված չէր որևէ մեղավորությունից: Վերոհիշյալի հիման վրա Դատարանը եզրակացրել է, որ տվյալ միջոցը չի հետապնդել օրինական նպատակ թիվ 1 արձանագրության 3-րդ հոդվածի իմաստով:

23. Դատարանը նաև քննել է գործեր, որոնք առնչվել են մասնակի խնամակալության տակ գտնվելու բերումով քվեարկելու իրավունքից զրկման դեպքերին: «Ալայոս Քիսսն ընդդեմ Հունգարիայի» գործով Դատարանը գտել է, որ նման միջոցը կարող էր հետապնդել օրինական նպատակ՝ այն է երաշխավորել, որ միայն իրենց գործողությունների հետևանքները հասկանալու, ինչպես նաև գիտակից և խելամիտ որոշումներ կայացնելու կարողություն ունեցող քաղաքացիները մասնակցեն հանրային գործերին: Այդուհանդերձ, քվեարկելու իրավունքի արգելքը դրվել է ինքնաբերաբար և ընդհանուր եղանակով՝ հաշվի չառնելով պաշտպանված անձի իրական կարողությունները, ինչպես նաև չտարբերակելով ամբողջական և մասնակի խնամակալությունը: Դատարանը նշեց, որ վիճահարույց է մտավոր և հոգեկան խնդիրներ ունեցող անձանց որպես միասնական խումբ դիտարկելը, ինչպես նաև այն, որ նրանց իրավունքների սահմանափակումը պետք է ենթարկվի խիստ հսկողության: Վերոհիշյալի հիման վրա Դատարանը եզրակացրել է, որ քվեարկելու իրավունքից զրկելն առանց շահագրգիռ անձի իրավիճակի անհատականացված դատական գնահատման համաչափ չէ հետապնդվող նպատակին:

Բ. Ազատագրկված անձանց առանձին դեպքեր

24. Կալանքի տակ գտնվող անձինք առհասարակ շարունակում են օգտվել Կոնվենցիայով երաշխավորված բոլոր հիմնարար իրավունքներից և ազատություններից՝ բացառությամբ ազատության իրավունքից, և սովորական կալանքը միանշանակ ընդգրկվում է Կոնվենցիայի 5-րդ հոդվածի կիրառման ոլորտի շրջանակներում («Հիրսթն ընդդեմ Միացյալ Թագավորության» (թիվ 2) [ՄՊ], § 69): Թիվ 1 արձանագրության 3-րդ հոդվածով նախատեսված իրավունքները բացառություն չեն կազմում: Հետևաբար, խոսք չի գնում այն բանի մասին, որ կալանավորված անձը զրկվի Կոնվենցիայով երաշխավորված իր իրավունքներից, պարզապես այն հանգամանքի բերումով, որ գտնվում է անազատության մեջ դատարանի վճռով: Ասվածը չի բացառում այնպիսի միջոցների նախաձեռնումը, որոնք կոչված կլինեն պաշտպանել հասարակությունը Կոնվենցիայով ամրագրված իրավունքների և ազատությունների վերացմանն ուղղված գործողություններից:

25. Հետևաբար, թիվ 1 արձանագրության 3-րդ հոդվածը չի բացառում ընտրական իրավունքների սահմանափակումներ մի անձի նկատմամբ, ով, օրինակ, թույլ է տվել լուրջ չարաշահումներ հանրային ծառայություն իրականացնելիս, կամ ում վարքագիծը սպառնացել է խարխիլել օրինականությունը կամ ժողովրդավարության հիմքերը: Այդուհանդերձ, չի կարելի թեթևամտորեն կիրարկել այս խիստ միջոցը, որը ենթադրում է քվեարկելու իրավունքից զրկում: Մյուս կողմից՝ համամասնության սկզբունքը պահանջում է, որ տեսանելի և բավարար կապ լինի պատժամիջոցի, վարքագծի և խնդրո առարկա անձի իրավիճակի միջև («Հիրսթն ընդդեմ Միացյալ Թագավորության» (թիվ 2) [ՄՊ], § 71):

26. Հետևաբար, ազատագրկված անձին իր քաղաքական իրավունքներից զրկելը կարող է համապատասխանել օրինական նպատակներին, ինչպիսիք են՝ հանցագործության կանխարգելումը, հանրային պատասխանատվության խթանումը, օրենքի գերակայության պահպանումը, ինչպես նաև ժողովրդավարության ճիշտ իրացումն ու պահպանումը: Այնուամենայնիվ, նման միջոցը չի կարող դրվել ինքնաբերաբար՝ անտեսելով համամասնության պահանջները:

27. Պետությունները կարող են որոշել դատավորին հանձնել դատարանի վճռով կալանքի տակ գտնվող անձանց քվեարկելու իրավունքի նկատմամբ սահմանափակող միջոցի համամասնությունը գնահատելու պարտականությունը կամ օրենքում ընդգրկել այնպիսի դրույթներ, որոնցով սահմանվեն տվյալ միջոցի կիրառման համար նախատեսված

հանգամանքները: Այս երկրորդ դեպքում՝ հենց նույն օրենսդիրը պետք է հավասարակշռության բերի հակասական շահերը՝ նպատակ ունենալով խուսափել ցանկացած ընդհանուր բնույթի ինքնաբերական և անխտրական եղանակով նշանակվող ցանկացած արգելքից: Այնուամենայնիվ, հատուկ դատական որոշման բացակայությամբ քվեարկելու իրավունքի արգելքի կիրառումն ինքնին չի հանդիսանում թիվ 1 արձանագրության 3-րդ հոդվածի խախտում (*«Սկոպոլան ընդդեմ Իտալիայի» (թիվ 3) [ՄՊ], § 102*):

28. *«Հիրսթն ընդդեմ Միացյալ Թագավորության» (թիվ 2)* գործի շրջանակներում Դատարանը գտել է թիվ 1 արձանագրության 3-րդ հոդվածի խախտում այն հիմնավորմամբ, որ քվեարկելու արգելքը կիրառվել էր ինքնաբերական և ընդհանուր եղանակով ազատագրկման տեսքով պատիժ կրող ցանկացած անձի նկատմամբ: Նշված արգելքը տարածվում էր 48 000 կալանքի տակ գտնվող անձանց վրա, ինչը մեծ թիվ էր և վերաբերում էր ազատագրկում հետ կապված բոլոր տեսակի պատիժներին՝ մեկօրյա ազատագրկումից մինչև ցմահ ազատագրկում, ինչպես նաև տարածվում էր զանցանքների վրա՝ համեմատաբար աննշան զանցանքներից մինչև ավելի ծանր արարքներ: Ավելին, որևէ ուղղակի կապ չէր հաստատվել անձի կողմից կատարված գործողությունների և քվեարկելու իրավունքից նրան զրկելու միջև: Դատարանը նույնպես եզրակացրել է, որ տեղի է ունեցել թիվ 1 արձանագրության 3-րդ հոդվածի խախտում *«Սոյլերն ընդդեմ Թուրքիայի»* գործով, որտեղ ազատագրկման դատապարտված անձանց քվեարկելու իրավունքի վրա դրված սահմանափակումներն ունեցել են ավելի նշանակալի հետևանքներ, քանի որ կիրառվել են նույնիսկ այն անձանց նկատմամբ, ովքեր չէին կրում ազատագրկման իրենց պատիժը: *«Ֆրոյլն ընդդեմ Ավստրիայի»* գործի շրջանակներում քվեարկության իրավունքից զրկումն համակարգային առումով ուղղված չի եղել կալանքի տակ գտնվող բոլոր անձանց դեմ, սակայն տարածվել է միայն նրանց նկատմամբ, ում համար սահմանվել է մեկ տարուց ավելի ազատագրկում դիտավորությամբ կատարված որևէ հանցագործության համար: Այնուամենայնիվ, վիճարկվող միջոցի ինքնաբերական սահմանման, տվյալ անձի վարքագծի և խնդրո առարկա հանգամանքների միջև որևէ կապ չի եղել: Հետևաբար, Դատարանը եզրակացրել է, որ քվեարկելու իրավունքից զրկելը համաչափ չի եղել հետապնդվող նպատակներին:

29. Փոխարենը՝ *«Սկոպոլան ընդդեմ Իտալիայի» (թիվ 3) [ՄՊ]* գործով Դատարանը քննության է առել քվեարկելու իրավունքի արգելքը, որը կիրառվել է միայն որոշակի հստակ սահմանված հանցագործությունների համար դատապարտված կամ ազատագրկման տեսքով պատիժ կրող անձանց նկատմամբ, երբ սահմանված պատժի տևողությունը գերազանցել է օրենքով ամրագրված շեմը: Օրենսդիրն ապահովել է այս միջոցի կիրառման համապատասխանեցումը յուրաքանչյուր գործի առանձնահատկություններին: Այն նաև համապատասխանեցրել է արգելող միջոցի տևողությունը նշանակված պատժին և, հետևաբար, անուղղակի կերպով՝ հանցանքի ծանրությանը: Դատարանի վճռով կալանքի տակ գտնվող անձանց շրջանում մեծ թիվ են կազմել նրանք, ովքեր պահպանել են խորհրդարանական ընտրություններին քվեարկելու հնարավորությունը: Բացի այդ, քվեարկելու անժամկետ արգելք կրող դատապարտված անձանց համար տվյալ համակարգով նախատեսվել է այդ իրավունքի վերականգնման հնարավորություն: Ուստի, Իտալիայում ընդունված համակարգը չի դրսևորել ավելորդ խստության հատկանիշներ: Հետևաբար, Դատարանը եզրակացրել է, որ թիվ 1 արձանագրության 3-րդ հոդվածի խախտում տեղի չի ունեցել:

30. Այդուհանդերձ, հարկ է նշել, որ թիվ 1 արձանագրության 3-րդ հոդվածի խախտում արձանագրելու համար ազատագրկված անձինք պետք է ապացուցեն, որ իրականում

քվեարկելու հնարավորություն չեն ունեցել: Բավարար չէ, որ նրանք իրենց կալանքի փաստ նախապես որպես հիմք որակեն, քանի որ մինչև խնդրո առարկա ընտրությունների անցկացումը կարող էին վրա հասնել այնպիսի իրադարձություններ, ինչպիսիք են՝ սահմանված ժամկետից շուտ ազատության մեջ հայտնվելը, հոգեբուժական հաստատություն տեղափոխվելը և այլն: Հետևաբար, նման դիմումները համարվել են անընդունելի՝ հիմքերի ակնհայտ բացակայության պատճառով (*«Դունը և այլք ընդդեմ Միացյալ Թագավորության»* (որոշ.)):

31. Մյուս կողմից՝ Դատարանը երբեք պատշաճ չի համարել պետությունների մատնանշել այն միջոցները, որոնք անհրաժեշտ են կալանավորների քվեարկելու իրավունքի արգելքի հետևանքով առաջացած խախտումները վերացնելու համար: Առավելագույնը՝ Դատարանը որոշակի ժամանակացույց է սահմանել (*«Գրինսը և Մ.Թ.-ն ընդդեմ Միացյալ Թագավորության»*, § 120): Փոխարենը՝ պետությունները չեն կարող որպես փաստարկ բերել այն ընթացակարգի բարդությունը, որն անհրաժեշտ կլինի խախտման հիմքում ընկած իրավունքը փոխելու համար: *«Անչուգովը և Գլադկովն ընդդեմ Ռուսաստանի»* գործով Դատարանը քննության է առել այն փաստարկը, ըստ որի արգելքը դրվել է Սահմանադրության այն դրույթով, որը կարող էր փոփոխության ենթարկվել միայն խորհրդարանի կողմից և կարող էր վերանայվել միայն նոր Սահմանադրության ընդունմամբ, ինչը կենթադրեր առանձնապես բարդ ընթացակարգ: Այնուամենայնիվ, Դատարանը հիշեցրել է, որ ըստ էության իշխանություններին է վերապահված Եվրոպայի խորհրդի Նախարարների կոմիտեի վերահսկողության ներքո ընտրել այն միջոցները, որոնք պետք է օգտագործվեն օրենսդրական նորմերը Կոնվենցիային համապատասխանեցնելու համար: Գովելի է, որ կառավարությունները դիտարկում են բոլոր հնարավոր ուղիները թիվ 1 արձանագրության 3-րդ հոդվածի կատարումն ապահովելու համար, այդ թվում՝ որոշակի քաղաքական գործընթացի միջոցով և Կոնվենցիային համապատասխան սահմանադրության մեկնաբանությամբ (§ 111):

32. Եվ վերջապես, *«Մուհան և Գիլոնն ընդդեմ Միացյալ Թագավորության»* գործով կայացրած որոշմամբ Դատարանի վճռով կալանքի տակ գտնվող անձինք բողոքում էին, որ հնարավորություն չեն ունեցել քվեարկել 2014 թվականին Շոտլանդիայի անկախության վերաբերյալ անցկացված հանրաքվեին: Համարելով, որ թիվ 1 արձանագրության 3-րդ հոդվածը կիրառելի չէ հանրային կարծիքի նման հարցման պարագայում՝ դատավորը մերժեց նրանց դիմումը:

Գ. Բնակություն՝ որպես քվեարկելու իրավունքի հասանելիության պայման

1. Տվյալ տարածքում չբնակվող քաղաքացիների քվեարկություն

33. 1961 թվականից մի շարք գործերի շրջանակներում Հանձնաժողովը որպես ակնհայտորեն անհիմն անընդունելի է համարել այն բողոքները, որոնք բխում էին բնակության չափորոշիչով պայմանավորված քվեարկելու իրավունքի վրա դրված սահմանափակումներից (տե՛ս Հանձնաժողովի որոշումներ *«Իքս-ը և այլք ընդդեմ Բելգիայի»*, *«Իքս-ն ընդդեմ Միացյալ Թագավորության»* (1976թ. դեկտեմբերի 11), *«Իքս-ն ընդդեմ Միացյալ Թագավորության»* (1979թ. փետրվարի 28), *«Իքս-ն ընդդեմ Միացյալ Թագավորության»* (1982թ. մայիսի 13), *«Պոլակոն և Գարաֆոլոն ընդդեմ Իտալիայի»*, *«Լուրջն ընդդեմ Գերմանիայի»* գործերով):

34. Հետագայում Դատարանը հաստատեց թիվ 1 արձանագրության 3-րդ հոդվածի համատեղելիությունը բնակությամբ պայմանավորված չափորոշիչի սահմանման հետ: Այն կարող է արդարացվել մի շարք պատճառներով:

- Առաջին՝ ենթադրություն կա, որ ոչ ռեզիդենտ քաղաքացին պակաս ուղղակիորեն կամ շարունակաբար առնչվում է իր երկրի առօրյա խնդիրներին և այդքան լավ դրանց ծանոթ չէ:
- Երկրորդ՝ խորհրդարանական ընտրությունների թեկնածուները չեն կարող տարբեր ընտրական խոստումներ տալ արտասահմանում գտնվող քաղաքացիներին, իսկ վերջիններս պակաս ազդեցություն ունեն թեկնածուների ընտրության կամ նրանց ընտրական ծրագրերի ձևավորման վրա:
- Երրորդ՝ սերտ կապ կա խորհրդարանական ընտրություններին քվեարկելու իրավունքի և այն հանգամանքի միջև, որ անձն ուղղակիորեն առնչվում է նման եղանակով ընտրվող քաղաքական օրգանների գործողությունների հետ:
- Չորրորդ՝ արտասահմանում բնակվող քաղաքացիների ազդեցությունը սահմանափակելու օրենսդրի օրինական մտահոգությունն այն հարցերում, որոնք անշուշտ հիմնարար բնույթ կրելով հանդերձ՝ առաջին հերթին առնչվում են երկրում բնակվող անձանց վրա:

35. Նույնիսկ եթե համապատասխան անձը չի խզել իր կապերը ծագման երկրի հետ, իսկ վերոնշյալ տարրերից մի քանիսը թերևս չեն կիրառվում նրա պարագայում, օրենքը չի կարող միշտ հաշվի առնել յուրաքանչյուր առանձին դեպքը, այլ պետք է ամրագրի ընդհանուր կանոն (*«Հիլբեն ընդդեմ Լիխտենշտեյնի»* (որոշ.), *«Դոյլն ընդդեմ Միացյալ Թագավորության»* (որոշ.), *«Շինդլերն ընդդեմ Միացյալ Թագավորության»*, § 105):

36. Այսպիսով, Դատարանն անհիմն է համարել իրենց ծագման երկիրը լքած անձանց դիմումները (*«Հիլբեն ընդդեմ Լիխտենշտեյնի»* (որոշ.)): Այս երկու գործերի շրջանակներում Դատարանը, մասնավորապես, հաշվի է առել, որ ռեզիդենտ չհանդիսացող անձինք կարող էին քվեարկել ազգային ընտրություններին իրենց արտագաղթին հաջորդած տասնհինգ տարիների ընթացքում և այս իրավունքն ամեն դեպքում վերականգնվում էր, եթե շահագրգիռ անձինք վերադառնում էին իրենց ծագման երկրում բնակություն հաստատելու համար, հետևաբար, Դատարանը վերոհիշյալի հիման վրա եզրակացրել է, որ տվյալ միջոցը անհամաչափ չէ (*«Դոյլն ընդդեմ Միացյալ Թագավորության»* (որոշ.), *«Շինդլերն ընդդեմ Միացյալ Թագավորության»*, § 108): Բացի այդ, Դատարանը որպես գործին առնչվող հանգամանք է դիտարկել այն, որ խորհրդարանը տարբեր առիթներով ջանք է գործադրել հակասական շահերը հավասարակշռության բերելու և ոչ ռեզիդենտ անձանց քվեարկելու իրավունքների հարցը մանրամասն քննարկելու համար, ընդ որում՝ խորհրդարանի կարծիքների զարգացումն արտացոլվել է այն բնակության ժամկետում մտցված փոփոխություններում՝ արտերկրում բնակվող ընտրողների համար քվեարկության հնարավորություն նախատեսելու պահից սկսած (*նույն տեղում*, § 117):

37. *«Շինդլերն ընդդեմ Միացյալ Թագավորության»* գործի շրջանակներում Դատարանը նշել է եվրոպական մակարդակով ուշադրության աճը միգրացիայի նկատմամբ՝ ծագման և բնակության երկրների քաղաքացիական կյանքին մասնակցության տեսանկյունից: Այնուամենայնիվ, Դատարանը համարել է, որ քննության առնված փաստաթղթերից ոչ մեկը թույլ չէր տալիս եզրակացնել, որ իրավունքի ներկայիս վիճակում պետությունները պարտավորված են ոչ ռեզիդենտ անձանց շնորհել քվեարկության իրավունքից օգտվելու անսահմանափակ հնարավորություն: Միևնույն ժամանակ, թեև անդամ պետությունների դատաիրավական պրակտիկայում դիտվել է ոչ ռեզիդենտ անձանց քվեարկության

իրավունքը թույլատրելու հստակ միտում, և պետությունների ճնշող մեծամասնությունն արտահայտվել է անսահմանափակ իրավունքի օգտին, սակայն ոչ ռեզիդենտ անձանց համար քվեարկելու անսահմանափակ իրավունքի հարցում դեռևս հնարավոր չէ արձանագրել միասնական մոտեցման և դրական համաձայնության գոյությունը: Հետևաբար, վերոհիշյալի հիման վրա Դատարանը եզրակացրել է, որ թեև տվյալ հարցը գուցե հետագա ընթացք ստանալու հիմք ունի, սակայն պետություններին շարունակում է վերապահված լինել այս ոլորտում սեփական հայեցողության լայն լուսանցք (§§ 109-115):

2. Որոշ տարածքների առանձին դեպքեր

38. *«Պին ընդդեմ Ֆրանսիայի»* գործի շրջանակներում Դատարանը կրկին ուսումնասիրեց հնարավոր քվեարկողի և համապատասխան տարածքի միջև բավականաչափ ուժեղ կապի գոյության գաղափարը: Ծագումով մայր երկրից մի ֆրանսիացի, ով բնակվում էր Նումեայում, գրկվել էր Նոր Կալեդոնիայի կոնգրեսի ընտրություններին քվեարկելու իրավունքից այն հիմնավորմամբ, որ նա չէր բավարարել տվյալ տարածքում առնվազն տաս տարի բնակվելու պահանջը: Դատարանը համարել է, որ բնակչության տևողության համար սահմանված շեմը համապատասխանում է այն նկատառումներին, որոնք կոչված են երաշխավորել, որ ընտրություններն արտացոլեն «շահագրգիռ» ազգաբնակչության խմբերի կամքը, և որ դրանց արդյունքը չփոփոխվի վերջերս տվյալ տարածք ժամանած և դրա հետ ամուր կապեր չունեցող ազգաբնակչության խմբերի զանգվածային քվեարկությամբ: Բացի այդ, քվեարկելու իրավունքի սահմանափակումը հանդես է եկել որպես Կալեդոնիայի քաղաքացիության ներդրման ուղղակի և անհրաժեշտ հետևանք: Դիմումատուն չի եղել Նոր Կալեդոնիայի քաղաքական մարմինների ակտերի առարկա նույն աստիճանով, որքանով երկրում բնակվող քաղաքացիները: Հետևաբար, բնակչության նախապայմանը եղել է արդարացված և հետապնդել է օրինական նպատակ: Նոր Կալեդոնիայի պատմությունը և կարգավիճակը, որն իրենից ներկայացնում էր անցումային փուլ ամբողջական ինքնիշխանության և ինքնորոշման գործընթացից առաջ, դիտարկվել են որպես «տեղի կարիքներ», որոնցով կարող էր հիմնավորվել այնպիսի կարևոր պահանջը, որպիսին է տաս տարվա բնակչության պայմանը, որը թերևս հանդիսացել է անհրաժեշտ տարր մահաբեր հակամարտության հանդարտեցման համար:

39. *«Սևվինգերն ընդդեմ Նիդեռլանդների»* գործը վերաբերում էր որոշակի ինքնավարություն ունեցող Արուբա կղզու բնակիչների համար Նիդեռլանդների խորհրդարանական ընտրություններին քվեարկելու անհնարության հարցին: Փոխարենը նրանք կարող էին քվեարկել կղզու խորհրդարանի ընտրություններին, որը լիազորված էր պատվիրակներ ուղարկել Նիդեռլանդների խորհրդարան: Դատարանը համարեց, որ Արուբայում բնակվող ծագումով հոլանդացի անձինք կարող էին նման եղանակով ազդել պատվիրակների ժողովի որոշումների վրա, և բացի այդ, Նիդեռլանդների խորհրդարանի կողմից ընդունված որոշումները նույն չափով նրանց վրա չէին անդրադառնում, որքան Նիդեռլանդների բնակիչների վրա: Դատարանը մերժել է նաև թիվ 1 արձանագրության 3-րդ հոդվածի համադրությամբ 14-րդ հոդվածից բխող բողոքը՝ գտնելով, որ Արուբայի բնակիչները միակն էին, որոնք օժտված էին կղզու խորհրդարանի ընտրություններին քվեարկելու հնարավորությամբ և, հետևաբար, չէին գտնվում արտերկրում բնակվող ծագումով հոլանդացի այլ անձանց հետ նույնանման դիրքում:

40. Տվյալ պետության տարածքում քվեարկության աշխարհագրական և տարածքային կազմակերպման առնչությամբ Դատարանն ընդունել է, որ նախկին ընտրական ցուցակից ընտրողի անվան հեռացման և նոր ցուցակում դրա գրանցման պահանջից բխող

պարտավորությունները հետապնդում էին հետևյալ օրինական նպատակները՝ ապահովել բավարար ժամկետների և հսկողության պայմաններում ընտրողների ցուցակների կազմումը, ապահովել քվեարկության ընթացակարգերի սահուն զարգացումը, ինչպես նաև խուսափել խարդախ գործողություններից: Դատարանը գտավ, որ ցուցակից անվան դուրս գրման և հետագայում նոր ցուցակում դրա գրանցման հետ կապված պաշտոնական ընթացակարգերը կատարելու պարտավորությունը օրենքով սահմանված ժամկետներում ընդգրկվում է տվյալ հարցում պետությանը վերապահված սեփական հայեցողության լայն լուսանցքի իրացման շրջանակներում (*«Բենկադուրն ընդդեմ Ֆրանսիայի»*):

3. Ոչ ռեզիդենտ անձանց համար քվեարկության կազմակերպման նյութական հայեցակետ

41. Թիվ 1 արձանագրության 3-րդ հոդվածը պետությունների վրա չի դնում այնպիսի համակարգ ստեղծելու պարտավորություն, որը թույլ կտա իրացնել քվեարկելու իրավունքն արտերկրում հայրենիքի սահմաններից դուրս բնակվող քաղաքացիների համար: *«Միտարոպուլտսը և Գիսկումոփոլոսն ընդդեմ Հունաստանի»* [ՄՊ] գործով դիմումատուները բողոք էին ներկայացրել առ այն, որ տվյալ կետի առնչությամբ կանոնակարգի բացակայության պայմաններում նրանք չէին կարող իրացնել քվեարկելու իրենց իրավունքն այն երկրում, որտեղ նրանք ժամանել էին իրենց հայրենիքից (Ֆրանսիայից), մինչդեռ իրենց ծագման երկրի (Հունաստանի) սահմանադրությունը նախատեսում էր նման հնարավորություն: Դատարանը եզրակացրեց, որ թիվ 1 արձանագրության 3-րդ հոդվածի խախտում տեղի չի ունեցել այն հիմնավորմամբ, որ ֆինանսական, ընտանեկան և մասնագիտական կարգի անհարմարությունները, որոնց կբախվեին դիմումատուները, եթե ուղևորվեին իրենց ծագման երկիր քվեարկելու նպատակով, անհաշտի չէին թվում քվեարկելու նրանց իրավունքի նկատմամբ ոտնձգություն կազմելու աստիճան:

42. Փոխարենը՝ երբ ազգային օրենսդրությունը նախատեսում է նման համակարգ, դրանից կարող են բխել հստակ պարտավորություններ, մասնավորապես, անհրաժեշտության դեպքում՝ օտար երկրի տարածքում կրկին ընտրություններ անցկացնելու պարտավորությունը: *«Ռիզան և այլք ընդդեմ Բուլղարիայի»* գործի շրջանակներում Դատարանը կոչ արեց չանտեսել այն հանգամանքը, որ մեկ այլ ինքնիշխան պետության տարածքում նույնիսկ սահմանափակ թվով ընտրատեղամասերում նոր ընտրություններ կազմակերպելը կարող էր հանգեցնել դիվանագիտական կամ գործառնական բնույթի լուրջ խոչընդոտների և առաջացնել լրացուցիչ ծախսեր: Այդուհանդերձ, Դատարանը գտավ, որ նոր ընտրությունների անցկացումը մի ընտրատեղամասում, որտեղ արձանագրվել են քվեարկության օրն ընտրական գործընթացում ընտրական հանձնաժողովի կողմից կատարված խախտումների լուրջ նշաններ, թույլ կտար համապատասխանեցնել ընտրության արդյունքների չեղարկման օրինական նպատակը, այն է՝ ընտրական գործընթացի օրինականության պահպանումը, ընտրողների և խորհրդարանական ընտրություններին առաջադրված թեկնածուների սուբյեկտիվ իրավունքների:

43. *«Օրանն ընդդեմ Թուրքիայի»* գործի շրջանակներում խոսքը գնում էր ոչ ռեզիդենտ թուրք ընտրողների կողմից անկախ թեկնածուների օգտին մաքսային կետերում տեղադրված ընտրատեղամասերում քվեարկելու անհնարության մասին: Նման պայմաններում տված քվեները կարող էին տրվել միայն քաղաքական կուսակցությունների օգտին: Նշված սահմանափակումն արդարացվում էր այն

հանգամանքով, որ անհնար էր երկրի սահմաններից դուրս բնակվող ընտրողներին կցել որևէ ընտրատարածքի: Դատարանը համարեց, որ տվյալ սահմանափակումը պետք է դիտարկվեր հաշվի առնելով երկրի սահմաններից դուրս բնակվող քաղաքացիների համար քվեարկելու իրավունքի իրացման հարցում ընդունված ընդհանուր սահմանափակումները և, մասնավորապես՝ առաջին հերթին, երկրում բնակվող անձանց վրա անդրադարձող հարցերով ընտրություններին արտերկրում բնակվող քաղաքացիների ազդեցությունը սահմանափակելու օրենսդիր իշխանության օրինական մտահոգությունը: Սրան պետք է գումարվի այն դերակատարումը, որոնք ունեն քաղաքական իշխանությունները, և որոնք հանդիսանում են իշխանության գալու հնարավորություն ունեցող միակ այն կազմավորումները, որոնք օժտված են իրենց երկրի ողջ վարչակարգի վրա ազդեցություն գործելու կարողությամբ: Ավելին, նշված սահմանափակումը հետապնդում էր երկու այլ օրինական նպատակ՝ բավարարել ժողովրդավարական բազմակարծությունը՝ միաժամանակ խուսափելով քվեարկության ավելորդ մասնատումից, ինչպես նաև խթանել ժողովրդի կամքի արտահայտումն օրենսդիր իշխանության ընտրության հարցում: Հետևաբար, նշված սահմանափակումը համապատասխանում էր օրենսդրի օրինական մտահոգությանը, այն է՝ ապահովել երկրի և ընտրությունների ավարտին դրա ղեկավարման համար պատասխանատու կառավարության քաղաքական կայունությունը: Ուստի, թիվ 1 արձանագրության 3-րդ հոդվածի խախտում տեղի չի ունեցել:

III. Պասիվ հայեցակետ՝ ընտրություններին որպես թեկնածու առաջադրվելու իրավունք

44. «Ակտիվ» հայեցակետի օրինակով՝ «պասիվ» հայեցակետը, այն է՝ ընտրություններին որպես թեկնածու առաջադրվելու իրավունքը, նախադեպային պրակտիկայի ներքո հաստատված իրողություն է: Եվ իսկապես, Դատարանը հայտարարել է, որ ընտրություններին որպես թեկնածու առաջադրվելու իրավունքը «ներհատուկ է իսկապես ժողովրդավարական վարչակարգի գաղափարին» (*«Պողկոլզինան ընդդեմ Լատվիայի»*, § 35): Թիվ 1 արձանագրության 3-րդ հոդվածի այս հայեցակետի վերաբերյալ դատարանի կողմից իրականացվող վերահսկողությունը, այնուամենայնիվ, պակաս խիստ է, քան քվեարկելու իրավունքի հարցում իրականացվող վերահսկողությունը, ասել է թե՛ համամասնության վերահսկողությունը պակաս խորացված է: Ուստի, երբ խոսքը գնում է «պասիվ» հայեցակետի մասին, պետություններն օգտվում են սեփական հայեցողության ավելի լայն լուսանցքից (*«Էտքսերերիան և այլք ընդդեմ Իսպանիայի»*, § 50, *«Դավիդովը և այլք ընդդեմ Ռուսաստանի»*, § 286):

45. Այդուհանդերձ, Կոնվենցիայի 14-րդ հոդվածով նախատեսված խտրականության արգելքը պակաս կիրառելի չէ դրա նկատմամբ: Այս համատեքստում, չնայած ընտրություններին որպես թեկնածու առաջադրվելու իրավունքի ոլորտում պետություններին սովորաբար վերապահված սեփական հայեցողության լուսանցքին, անկողմնակալ և ողջամիտ հիմնավորման գաղափարը պետք է մեկնաբանվի հնարավորինս խիստ իմաստով, երբ վերաբերմունքի տարբերությունը պայմանավորված է ռասայի, մաշկի գույնի և ազգային ծագման հատկանիշով (*«Սեյդիչը և Ֆինչին ընդդեմ Բոսնիա և Հերցեգովինայի»* [ՄՊ], § 44):

46. *«Սեյդիչը և Ֆինչին ընդդեմ Բոսնիա և Հերցեգովինայի»* [ՄՊ] գործով Դատարանը քննության է առել մի բացառող կանոն, ըստ որի Բոսնիա և Հերցեգովինայի Ժողովրդական

պալատի ընտրություններին որպես թեկնածու առաջադրվելու հնարավորություն ստանալու համար պահանջվում էր հայտարարել «կազմավորող ժողովրդներից» մեկին պատկանելության մասին: Հնարավոր թեկնածուները, ովքեր հրաժարվում էին հայտարարել նման պատկանելության մասին, չէին կարող առաջադրվել: Դատարանը նշեց, որ նման բացառող կանոնը հետապնդում էր առնվազն մեկ նպատակ, որն առհասարակ համատեղելի էր Կոնվենցիայի ընդհանուր նպատակների հետ, այն է՝ խաղաղության վերահաստատումը: Երբ վիճահարույց սահմանադրական դրույթներն ընդունվել էին, երկրում տիրում էր շատ փխրուն զինադադար: Խնդրո առարկա դրույթները կոչված էին դադարեցնել բռնի հակամարտությունը, որն առանձնանում էր ցեղասպանության և էթնիկ գտումների դեպքերով: Հակամարտության բնույթն այնպիսին էր, որ «կազմավորող ժողովուրդների» (այն է՝ բոսնիացիների, խորվաթների և սերբերի) հավանությունն անհրաժեշտ էր խաղաղությունն ապահովելու համար: Այս իրողությամբ կարող էր բացատրվել՝ առանց անհրաժեշտաբար այն հիմնավորելու, այլ համայնքների (մասնավորապես՝ տեղի գնչու և հրեա համայնքների) ներկայացուցիչների բացակայությունը խաղաղ բանակցություններին և հետհակամարտային այս հասարակությունում «կազմավորող ժողովուրդների» միջև իրական հավասարություն ապահովելու հարցում բանակցողների ունեցած մտահոգությունը: Այնուամենայնիվ, Բոսնիա և Հերցեգովինայում Դեյթոնի համաձայնագրից ի վեր տեղի են ունեցել կարևոր դրական զարգացումներ: Բացի այդ, վավերացնելով Կոնվենցիան և դրա Արձանագրություններն առանց վերապահումների՝ պատասխանող պետությունը միանշանակ ընդունել է համապատասխան չափանիշները կատարելու պարտավորությունը: Դատարանը նաև եզրակացրեց, որ ընտրություններին որպես թեկնածու առաջադրվելու ծագումով գնչու և հրեա դիմումատուների շարունակական անկարողությունը պայմանավորված չէր անկողմնակալ և ողջամիտ հիմնավորմամբ, ուստի, և հակասում էր Կոնվենցիայի 14-րդ հոդվածին՝ թիվ 1 արձանագրության 3-րդ հոդվածի համադրությամբ:

47. *«Չորնիչն ընդդեմ Բոսնիա և Հերցեգովինայի»* գործի շրջանակներում Դատարանը, ելնելով նույն նկատառումներից, եզրակացրեց, որ Ժողովրդների պալատի և նախագահական ընտրություններին մասնակցելու դիմումատուի իրավունք չունենալու հանգամանքը կազմում է թիվ 1 արձանագրության 3-րդ հոդվածի խախտում: Հաշվի առնելով *«Սեյդիչը և Ֆինչին ընդդեմ Բոսնիա և Հերցեգովինայի»* [ՄՊ] գործով վճռի կատարման ավելորդ ուշացումը և այն հանգամանքը, որ տվյալ պարագայում ձևակերպված խախտումը եղել է նման ուշացման ուղղակի արդյունք՝ Դատարանը գործը քննել է Կոնվենցիայի 46-րդ հոդվածի ներքո: Դատարանը հաստատել է, որ Բոսնիա Հերցեգովինայում տեղի ունեցած ողբերգական հակամարտությունից 18 տարի անց ժամանակն էր եկել ընդունել այնպիսի քաղաքական համակարգ, որով հնարավոր կլինի այդ երկրի յուրաքանչյուր քաղաքացուն շնորհել երկրի նախագահական ընտրություններին և Ժողովրդների պալատի ընտրություններին որպես թեկնածու առաջադրվելու իրավունք՝ առանց էթնիկական պատկանելությամբ պայմանավորված տարբերության (*«Չորնիչն ընդդեմ Բոսնիա և Հերցեգովինայի»*, § 43):

48. *«Տանասեն ընդդեմ Մոլդովայի»* գործի շրջանակներում Դատարանը արտահայտվեց երկքաղաքացիության հարցի շուրջ՝ թեպետև միայն թիվ 1 արձանագրության 3-րդ հոդվածի տեսանկյունից: Դատարանն արձանագրել է ընդհանուր համաձայնության գոյությունն այն փաստի շուրջ, որ բազմաքաղաքացիության թույլատրված լինելու դեպքում մեկից ավելի քաղաքացիություն ունենալու հանգամանքը չպետք է պատճառ դառնա պատգամավորին ընտրություններին մասնակցելու իրավունքից զրկելու համար,

նույնիսկ եթե բնակչության կազմում դիտվում է որոշակի էթնիկական բազմազանություն, և մի քանի քաղաքացիություն ունեցող պատգամավորները կարող են մեծ թիվ կազմել:

Ա. Որպես թեկնածու առաջադրվելու հնարավորության բացակայություն և ժողովրդավարական կարգ

49. Երբ խոսքը գնում է ընտրություններին որպես թեկնածու առաջադրվելու իրավունքի վրա դրված սահմանափակումների մասին, ժողովրդավարական կարգի պաշտպանությունն այն նպատակների մաս է կազմում, որոնք համատեղելի են օրենքի գերակայության սկզբունքի և Կոնվենցիայի ընդհանուր նպատակների հետ:

50. Այդուհանդերձ, Կոնվենցիայի հետ համատեղելի լինելու համար թեկնածության մերժումը պետք է առաջին հերթին լինի օրինական, այսինքն՝ պետք է հստակ նախատեսված լինի օրենքով: *«Դիքլեն և Սադակն ընդդեմ Թուրքիայի»* գործով դիմումատուները, որոնք լուծարված քաղաքական կուսակցության պատգամավորներ էին, դատապարտվել էին երկարաժամկետ ազատազրկման ապօրինի կազմակերպությանն իրենց պատկանելության համար: Եվրոպական դատարանի վճռով նրանց դատավարությունը կրկին բացվեց: Այդուհանդերձ, նրանց թեկնածությունը խորհրդարանական ընտրություններին մերժվեց այն հիմնավորմամբ, որ վերջիններս չեն մարել իրենց նշանակված ողջ պատիժը: գործը քննության առնելով Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 2-րդ մասի ներքո՝ Դատարանը նշեց, որ ազգային մակարդակով կայացված որոշումներից բխում է, որ դատավարության վերաբացման հետևանքով գործը պետք է դիտարկվեր որպես առաջին անգամ քննվող գործ: Դատարանը եզրակացրեց, որ դիմումատուների նախկին դատվածության պահպանումը և նրանց թեկնածության հետագա մերժումը նախատեսված չեն եղել օրենքով, ուստի, տեղի է ունեցել թիվ 1 արձանագրության 3-րդ հոդվածի խախտում:

51. *«Էտքսեբերրիան և այլք ընդդեմ Իսպանիայի»* գործով դիմումատուների թեկնածությունները չեղարկվել էին այն հիմնավորմամբ, որ նրանք նպատակ են ունեցել շարունակել բռնությունը և «ETA» ահաբեկչական կազմակերպության գործունեությունը սատարելու պատճառով նախկինում ապօրինի հռչակված և լուծարված երեք կուսակցությունների գործունեությունը: Դատարանը համարեց, որ ազգային մարմիններն իրենց տրամադրության տակ ունեցել են բազմաթիվ տարրեր եզրակացնելու, որ խնդրահարույց ընտրական կազմավորումները ցանկացել են շարունակել խնդրո առարկա քաղաքական կուսակցությունների գործունեությունը: Միննույն ժամանակ, Գերագույն տրիբունալը հիմնվել է խնդրահարույց խմբավորումների ծրագրում առկա լրացուցիչ տարրերի վրա, իսկ թեկնածությունների չեղարկման մասին որոշումները համապատասխան մարմինները կայացրել են անհատականացված կարգով: Ավելին, վիճարկվող վարույթի ընթացքում նշված խմբավորումները հնարավորություն են ունեցել ներկայացնել իրենց դիտողությունները, իսկ երկրի ներպետական մարմինները հաստատել են նրանց միանշանակ կապն ապօրինի հայտարարված քաղաքական կուսակցությունների հետ: Եվ վերջապես, Իսպանիայում առկա քաղաքական համատեքստը, այն է՝ երկրից անկախանալու օրակարգ ունեցող քաղաքական կուսակցությունների ներկայությունը որոշ ինքնավար համայնքների ղեկավար մարմինների կազմում, մասնավորապես Բասկերի երկրում, ապացուցում է, որ վիճարկվող միջոցը չի համապատասխանել անջատողական գաղափարների դրսևորման արգելելու մտադրությանը: Հետևաբար, Դատարանը եզրակացրել է, որ խնդրահարույց սահմանափակումը համաչափ է եղել հետապնդվող օրինական նպատակին:

52. Այդուհանդերձ, թեև երբ խոսքը գնում է թիվ 1 արձանագրության 3-րդ հոդվածի ակտիվ հայեցակետի մասին Դատարանի վերահսկողությունը պակաս խիստ է, այն սակայն չի բացակայում պասիվ հայեցակետի պարագայում: Մասնավորապես, համամասնության վերահսկողությունը, թեպետև համեմատաբար ավելի ճկուն է, սակայն իրական է: Մասնավորապես, Դատարանը գտել է թիվ 1 արձանագրության 3-րդ հոդվածի բազմակի խախտումներ ընտրված անձանց նկատմամբ կիրառված պատժամիջոցների անհամամասնության կապակցությամբ, երբ վերջիններիս քաղաքական կուսակցությունները լուծարվել են պետության տարածքային ամբողջականության և միասնության նկատմամբ ոտնձգություն կատարելու համար կամ քաղաքական վարչակարգի աշխարհիկ բնույթը պահպանելու նպատակով:

53. Կարևոր է նշել, որ ժողովրդավարական սկզբունքների հետ քաղաքական կուսակցությունների ծրագրերի անհամատեղելիության պատճառով դրանց արգելման հետ կապված գործերը սովորաբար քննվում են Կոնվենցիայի 11-րդ հոդվածի (հավաքների և միավորումների ազատություն) տեսանկյունից: Նման դեպքում թիվ 1 արձանագրության 3-րդ հոդվածը դիտարկվում է որպես երկրորդական և առանձին հարցադրում չի հարուցում (*«Ռեֆա Պարտիսի (Բարեկեցության կուսակցություն) և այլք ընդդեմ Թուրքիայի»* [ՄՊ], *«Լինկոլն ընդդեմ Չեխական Հանրապետության»*, *«Բասկերի ազգայնական կուսակցությունը՝ Իսպառլղեի տարածաշրջանային կազմակերպությունն ընդդեմ Ֆրանսիայի»*):

Բ. Պատմական համատեքստի կարևորություն

54. Թեև Դատարանն առաջնորդվում է համընդհանուր մտահոգությամբ, այն է՝ ապահովել ինչպես ընտրված անձանց անկախությունը, այնպես էլ ընտրողների ընտրության ազատությունը, սակայն այն ընդունում է, որ ընտրվելու իրավունքի չափորոշիչները տարբերվում են կախված յուրաքանչյուր պետությանը հատուկ պատմական և քաղաքական գործոններից: Եվրոպայի խորհրդի բազմաթիվ անդամ երկրների սահմանադրությամբ և ընտրական օրենսդրությամբ նախատեսված իրավիճակների մեծ թիվը վկայում է այս հարցում առկա հնարավոր մոտեցումների բազմազանության մասին: Թիվ 1 արձանագրության 3-րդ հոդվածի կիրառման իմաստով՝ ցանկացած ընտրական օրենք պետք է մշտապես դիտարկվի համապատասխան երկրի քաղաքական զարգացումների լույսի ներքո (*«Մաթոն-Մոհինը և Քլերֆայթն ընդդեմ Բելգիայի»*, § 54, *«Պոդկոլզինսն ընդդեմ Լատվիայի»*, § 33, *«Շդանոկան ընդդեմ Լատվիայի»* [ՄՊ], § 106):

55. *«Շդանոկան ընդդեմ Լատվիայի»* [ՄՊ] գործով դիմումատուն մի կուսակցության անդամ էր, որը 1991 թվականին կանգնած էր պետական հեղաշրջման փորձի հետևում: Հետևաբար, նրա թեկնածությունը ընտրություններին բազմիցս մերժվել էր՝ հիմք ընդունելով խնդրո առարկա կուսակցության կազմում նրա ունեցած գործունեությունը, որը շարունակվել էր պետական հեղաշրջման փորձից հետո: Դատարանը գտավ, որ կուսակցությունում դիմումատուի նախկին դիրքը՝ հեղաշրջման փորձի ժամանակ իր դրսևորած վարքագծով հանդերձ, դեռևս կարող էր հիմք ծառայել խորհրդարանական ընտրություններին նրա առաջադրումը թույլ չտալու համար: Եթե նման սահմանափակումը չէր կարող ընդունվել, օրինակ, մի երկրում, որն օժտված էր տասնյակ տարիների կամ հարյուրամյակների պատմություն ունեցող ժողովրդավարական ինստիտուտների կայացած շրջանակով, ապա այն կարող էր ընդունելի համարվել Լատվիայում՝ հաշվի առնելով վերջինիս պատմաքաղաքական համատեքստը և նոր ժողովրդավարական կարգին սպառնացող վտանգը: Այնուամենայնիվ, Դատարանի

հավելել է, որ Լատվիայի խորհրդարանը պետք է ապահովեր խնդրո առարկա սահմանափակման շարունակական հսկողությունը՝ դրանում կարճ ժամկետ մտցնելու նկատառումով: Նման եզրակացությունն էլ ավելի հիմնավորված է ներկայումս Լիտվայում արձանագրված ավելի մեծ կայունության լույսի ներքո և, մասնավորապես՝ հաշվի առնելով այն հանգամանքը, որ երկիրն ամբողջապես ինտեգրվել է եվրոպական կառույցներում: Ուստի, Լատվիայի օրենսդիր իշխանության ցանկացած անգործություն այս առնչությամբ կարող է բերել նրան, որ դատարանը կվերանայի իր այս եզրակացությունը (§§ 132-135):

56. Հետագայում Դատարանը կրկին ընդգծել է որոշակի ժամանակ անցնելու կարևորությունը և լուստրացիայի մասին օրենքներին առնչվող օրենսդրական նորմերի վերազնահատման անհրաժեշտությունը: *«Աղամտնս ընդդեմ Լատվիայի»* գործով դիմումատուն, ով նախկինում զբաղեցրել էր վարչապետի պաշտոնը, մերժում էր ստացել իր թեկնածության առաջադրման վերաբերյալ այն պատճառաբանությամբ, որ անցյալում նա կարող էր լինել ԿԳԲ-ի գործակալ: Դատարանը հաստատեց երկրի պատմական համատեքստին վերաբերող իր եզրակացությունները: Դատարանը, այդուհանդերձ, հավելեց, որ ժամանակի ընթացքում մի խումբ անձանց նկատմամբ ունեցած սուկ ընդհանուր կասկածանքն այլևս բավարար չէր և համապատասխան մարմինները պետք է փաստարկներ բերեին և լրացուցիչ ապացույցների տարրեր ներկայացնեին նման մերժումը հիմնավորելու նպատակով: Տվյալ դեպքում կիրառված օրենքն ուղղված էր ԿԳԲ-ի նախկին գործակալների դեմ: Բայց և այնպես, հաշվի առնելով նշված մարմնի գործառույթների բազմազանությունը՝ նման գաղափարը եղել է չափազանց ընդգրկուն: Նման հանգամանքներում այլևս բավարար չի եղել արձանագրել շահագրգռված անձի պատկանելությունը թիրախավորված խմբին: Քանի որ այս խումբը սահմանված է եղել չափազանց ընդհանրական եղանակով, դրա անդամների ընտրական իրավունքների վրա դրված սահմանափակումը պետք է առաջնորդվեր անհատականացված մոտեցմամբ, որը թույլ կտար հաշվի առնել նրանց իրական վարքագիծը: Այս անհատականացման անհրաժեշտությունը պետք է ժամանակի ընթացքում ավելի մեծ կարևորություն ստանար: Դիմումատուն երբեք չի մեղադրվել նրանում, որ ուղղակի կամ անուղղակի կերպով ներգրավված է եղել տոտալիտար վարչակարգի չարագործություններում՝ ո՛չ Լատվիայի անկախության, ո՛չ էլ երկրում ժողովրդավարական կարգի վերականգնման նկատմամբ ընդդիմության կամ թշնամության մասին վկայող որևէ գործողության մեջ: Ընդ որում, վերջինս բավականին մեծ ուշացումով էր պաշտոնապես ճանաչվել որպես ընտրություններին մասնակցելու իրավունքից զրկված՝ վերականգնված Լատվիայում տաս տարվա ռազմական և քաղաքական աշխատանքային ուղի անցնելուց հետո: Այսպիսով, միայն խիստ հրամայական նկատառումները կարող էին հիմնավորել դիմումատուի ընտրվելու անկարողությունը նման պայմաններում: Բացի այդ, տաս տարվա ժամկետը, որի ընթացքում ԿԳԲ-ի նախկին գործակալները կարող էին ենթարկվել օրենսդրական այլ ակտերով նախատեսված սահմանափակումների, երկարացվել էր ևս տաս տարով՝ առանց խորհրդարանի կամ կառավարության կողմից բերված որևէ պատճառաբանության: Հետևաբար, Դատարանը եզրակացրել է, որ ժամկետի նման երկարացումը կրել է ակնհայտորեն կամայական բնույթ դիմումատուի նկատմամբ:

Գ. Ընտրությունների կազմակերպում

57. Ընտրությունների գործնական կազմակերպումը բարդ հարց է, որ պահանջում է բարդ օրենսդրական նորմերի ընդունում, իսկ երբեմն էլ դրանց փոփոխություն: Երբ Դատարանն այս թեմայով արտահայտվելու առիթ է ունենում, այն չի անտեսում այս բարդությունը և

յուրաքանչյուր պետության առանձնահատկությունները: Ուստի, այստեղից նույնպես բխում է պետությունների համար սահմանված սեփական հայեցողության լայն լուսանցք:

58. Մասնավորապես, Դատարանը գտել է, որ ընտրական ցուցակների լավ կառավարումը նախապայման է հանդիսանում քվեարկության ազատության և արդարության համար: Ընտրություններին որպես թեկնածու առաջադրվելու արդյունավետ իրավունքն անկասկած պայմանավորված է քվեարկության իրավունքի արդար իրացմամբ: Վատ կազմված ընտրացուցակը կխախտեր ընտրություններին ամենայն հավասարությամբ և արդարությամբ առաջադրվելու թեկնածուների իրավունքը (*«Վրաստանի աշխատավոր կուսակցությունն ընդդեմ Վրաստանի»*, §§ 82-83): Այն դեպքերում, երբ ընտրացուցակներում գրանցվելու կանոնները փոփոխվել են առանց նախնական ծանուցման՝ քվեարկությունից ընդամենը մեկ ամիս առաջ, Դատարանը վստահաբար արձանագրել է, որ գրանցման նոր համակարգը ունեցել է թերություններ, սակայն ավելի մեծ կարևորություն է տվել այն հանգամանքին, որ իրավասու մարմինները ջանք չեն խնայել նոր քվեարկությունն ավելի արդար դարձնելու համար: Մասնավորապես, ընտրական մարմինները ստիպված են եղել շատ սեղմ ժամկետներում և հետհեղափոխական քաղաքական իրավիճակում շտկել ընտրացուցակներին բնորոշ անկազմակերպվածությունը, ընդ որում՝ ավելորդ և ոչ իրատեսական ակնկալիք կլինե՞ր նրանցից իդեալական լուծում սպասելը: Ուստի, ընտրողներին վերապահված է եղել իրենց գրանցման ստուգումը, ինչպես նաև անհրաժեշտության դեպքում՝ դրա շտկում պահանջելը: Վերոհիշյալի հիման վրա Դատարանը եզրակացրել է, որ այս հարցը գտնվում է պետության սեփական հայեցողության լուսանցքի շրջանակներում (*նույն տեղում*):

1. Թեկնածուների լուրջ մտադրությունների երաշխիք՝ ընտրական երաշխիքի կանոնը

59. Որոշ երկրների ընտրական օրենքներով նախատեսվում է ապագա թեկնածուի կողմից ընտրական գրավ ներկայացնելու պահանջը, որը կոչված է գերծ պահել անլուրջ թեկնածուներից: Նման միջոցառումներն էլ ավելի մեծ պատասխանատվություն են պահանջում ընտրություններին առաջադրվող անձանցից՝ վերապահելով ընտրություններին առաջադրվելու հնարավորությունը լուրջ թեկնածուներին և կանխելով հանրային միջոցների չարաշահական օգտագործումը: Հետևաբար, նման միջոցները կարող են որպես օրինական նպատակ հետապնդել արդյունավետ և կարգավորված ներկայացուցչության իրավունքի երաշխիքը (*«Սուխտվեցկին ընդդեմ Ուկրաինայի»*, §§ 61-62):

60. Այդուհանդերձ, ընտրական գրավի գումարը պետք է լինի համաչափ, որպեսզի հավասարակշռության բերի չարաշահական թեկնածությունների բացառումը մի կողմից, իսկ մյուս կողմից՝ բոլորի ընտրվելու իրավունքի երաշխավորումը: Այսպիսով, Դատարանը հաշվի է առնում խնդրո առարկա գումարի չափը, ընտրարշավների շրջանակներում պետության կողմից հատկացված միջոցները, ինչպես նաև ընտրությունների կազմակերպման համար կատարված այլ կարևոր ծախսերը, որոնք կարող են թեթևացվել ներկայացված ընտրական գրավների միջոցով:

61. Երբ պահպանվում է համամասնության սկզբունքը, ընտրական գրավի պահանջը չպետք է դիտարկվի որպես վարչական կամ ֆինանսական անհաղթահարելի արգելք այն անձանց համար, ովքեր իսկապես ցանկանում են իրենց թեկնածությունն առաջադրել ընտրություններին, ինչպես նաև չպետք է դիտարկվի որպես բավական ներկայացուցչությամբ օժտված քաղաքական շարժումների կայացումը սանձող միջոց

կամ ոտնձգություն բազմակարծության նկատմամբ (*«Սուխովեցկին ընդդեմ Ուկրաինայի»*, §§ 72-73): Ընտրական գրավ ներկայացնելու պարտավորությունը և ընտրական գրավը վերադարձնելու և (կամ) ընտրարշավի ծախսերը հատուցելու վերաբերյալ դրույթները՝ կուսակցության կողմից ձայների որոշակի տոկոս ստանալու դեպքում, ուղղված են այնպիսի գաղափարային հոսանքների խրախուսմանը, որոնք բավականաչափ ներկայացուցչական են և, հետևաբար, կարող են օրինական և համամասն լինել թիվ 1 արձանագրության 3-րդ հոդվածի իմաստով՝ հաշվի առնելով այս հարցում պետություններին վերապահված սեփական հայեցողության լայն լուսանցքը (*«Ռուսական պահպանողական գործարարների կուսակցությունը և այլք ընդդեմ Ռուսաստանի»*, § 94): Ասվածը վավերական է, նույնիսկ երբ ընտրական գրավը ենթակա չէ վերադարձման (*«Սուխովեցկին ընդդեմ Ուկրաինայի»*):

Այդուհանդերձ, ընտրական գրավի վերադարձվելուց կամ չվերադարձվելուց անկախ՝ այն կարող է հարցեր հարուցել թիվ 1 արձանագրության 1-ին հոդվածի տեսանկյունից: *«Ռուսական պահպանողական գործարարների կուսակցությունը և այլք ընդդեմ Ռուսաստանի»* գործի շրջանակներում Դատարանը եկել է այն եզրակացության, որ ներպետական ընթացակարգը, համաձայն որի կուսակցության ամբողջական ցուցակը չեղարկվել էր ցուցակում ընդգրկված որոշ թեկնածուների կողմից ներկայացված ոչ ստույգ տեղեկությունների պատճառով, խախտել է իրավական պաշտպանության սկզբունքը: Ընդ որում, դիմումատու կուսակցությունն արդեն վճարել էր ընտրական գրավը, որը չէր վերադարձվել: Հիմք ընդունելով թիվ 1 արձանագրության 3-րդ հոդվածի ներքո իր եզրակացությունը՝ Դատարանը գտավ, որ նշված գումարը վերադարձնելու մերժումը կազմել է թիվ 1 արձանագրության 1-ին հոդվածի խախտում:

2. Խուսափում քաղաքական դաշտի ավելորդ մասնատումից

62. Ընտրացուցակի ներկայացման համար պահանջվող ստորագրությունների թվի հետ կապված պայմանները խոչընդոտ չեն հանդիսանում իր ներկայացուցիչների ընտրության վերաբերյալ ժողովրդի կամքի արտահայտման համար (*«Ասենսիո Մերկեդան ընդդեմ Իսպանիայի»*, Հանձնաժողովի որոշում, *«Կանարյան կղզիների ազգայնական դաշնությունն ընդդեմ Իսպանիայի»* (որոշ.), *«Բրիտո Դա Միլվա Գուեռան և Սոսա Մագնոն ընդդեմ Պորտուգալիայի»* (որոշ.), *«Միհաելա Միհայ Նեագուն ընդդեմ Ռումինիայի»* (որոշ.), § 31):

63. Այդուհանդերձ, նման միջոցները պետք է հետապնդեն օրինական նպատակ, օրինակ՝ թեկնածուների միջև ողջամիտ ընտրությունը, որը կոչված է ապահովել նրանց ներկայացուցչականությունը և զերծ մնալ հնարավոր չարաշահական թեկնածուներից: Ընդ որում՝ նման միջոցները պետք է համաչափ լինեն նման օրինական նպատակին: Այսպիսով, ընտրացուցակներում ընդգրկված քաղաքացիների ընդհանուր թվի 0,55% կազմող 100 000 ստորագրությունների շեմը համարվել է թիվ 1 արձանագրության 3-րդ հոդվածի դրույթներին համապատասխան (*նույն տեղում*):

64. Միաժամանակ, ընտրամատյաններում անձանց ստորագրումը նրանց գրանցման մասին տեղեկանքներով ուղեկցելու պահանջը հետապնդում է օրինական նպատակ, այն է՝ ապահովել, որ ստորագրած անձինք օժտված լինեն ընտրելու կարողությամբ, և նրանցից յուրաքանչյուրը սատարի միայն մեկ թեկնածուի: Այսպիսով, Դատարանը գտել է, որ անհամամասնություն չի կազմում մերժել մի թեկնածություն, որը չի բավարարում այս պաշտոնական չափորոշիչները (*«Բրիտո Դա Միլվա Գուեռան և Սոսա Մագնոն ընդդեմ Պորտուգալիայի»* (որոշ.)):

65. Այնուամենայնիվ, ստորագրությունների նվազագույն թվի և դրանց ստուգման պահանջը պետք է համապատասխանի օրենքի գերակայության կանոններին և պետք է պաշտպանի ընտրությունների ամբողջականությունը: *«Թահիրովն ընդդեմ Ադրբեջանի»* գործով դիմումատուի թեկնածությունը մերժած ընտրական հանձնաժողովի երաշխիքները բավարար չեն եղել, մասնավորապես, ստորագրությունների վավերականության վերաբերյալ արտահայտված փորձագետների նշանակման եղանակի մասով: Ավելին, դիմումատուն հնարավորություն չի ունեցել ներկա գտնվել հանձնաժողովի նիստերին և ներկայացնել իր փաստարկները, որոնցից ոչ մեկը քննության առարկա չի դարձել: Հետևաբար, ստորագրությունների ենթադրյալ անվավերականության պատճառաբանությամբ դիմումատուի թեկնածության մերժումը եղել է կամայական: Բացի այդ, հիմք ընդունելով Եվրոպայում անվտանգության և համագործակցության կազմակերպության գեկույցը Դատարանը նաև հաշվի է առել նման թերությունների համակարգային բնույթը և ստորագրությունների անվավերականության պատճառաբանությամբ կամայականորեն մերժված ստորագրությունների թիվը: Վերոհիշյալի հիման վրա Դատարանը եզրակացրել է, որ կառավարության կողմից միակողմանի հայտարարությունը բավարար չէ մարդու իրավունքների պահպանումը երաշխավորելու համար: Հետևաբար, Դատարանը մերժեց պատասխանող կողմի հայտարարությունը և անցավ գործի քննությանը ըստ էության:

66. Շեմի նման չափանիշներն ընդունվել են նաև Դատարանի կողմից ընտրությունների արդյունքների համաձայն խորհրդարանական տեղերի բաշխման առնչությամբ: Ցանկացած ընտրական համակարգ փորձում է համապատասխանել այնպիսի նպատակների, որոնք երբեմն իրար հետ քիչ են համատեղելի, այն է՝ հնարավորինս հավատարմորեն արտացոլել ժողովրդի կարծիքները մի կողմից, իսկ մյուս կողմից՝ ուղղորդել գաղափարային հոսանքները բավարար հետևողականությամբ և պարզությամբ օժտված քաղաքական կամքի ձևավորումը խթանելու նպատակով: Հետևաբար, թիվ 1 արձանագրության 3-րդ հոդվածը չի ենթադրում, որ բոլոր ընտրաթերթիկները պետք է հավասար կշիռ ունենան վերջնական արդյունքներում, ո՛չ էլ ենթադրում է, որ յուրաքանչյուր թեկնածու պետք է հաղթանակ տանելու հավասար հնարավորություններ ունենա, ընդ որում՝ ոչ մի համակարգի ներքո հնարավոր չի լինի խուսափել «կորցրած ձայների» երևույթից (*«Նոր դեմոկրատներ» կուսակցությունը և «Մեր հող» կուսակցությունը ընդդեմ Լատվիայի»* (որոշ.)):

67. Ընտրական անցողիկ շեմի հետևանքները կարող են տարբերվել կախված երկրից, ընդ որում՝ զանազան համակարգերը կարող են տարաձայնող և նույնիսկ հակասական քաղաքական նպատակներ հետապնդել: Մի համակարգ կարող է նախապատվությունը տալ խորհրդարանում կուսակցությունների հավասար ներկայացուցչությանը, մինչդեռ մեկ այլ համակարգ կարող է միտված լինել փոքր կուսակցությունների միջոցով ներկայացուցչության մասնատումից խուսափելուն՝ նպատակ ունենալով պատգամավորների բացարձակ մեծամասնությանը հնարավորություն տալ կառավարություն կազմել: Դատարանը համարել է, որ այս նպատակներից ոչ մեկը ինքնին անողջամիտ չէ: Բացի այդ, անցողիկ շեմերի դերակատարումը տարբերվում է, մասնավորապես՝ կախված դրանց չափից, ինչպես նաև յուրաքանչյուր երկրում գործող կուսակցությունների առանձնահատկություններից: Ցածր անցողիկ շեմը չի բացառում փոքր կազմավորումների գոյացումը, ինչը ավելի է դժվարացնում կայուն մեծամասնությունների ձևավորումը, մինչդեռ քաղաքական դաշտի խիստ մասնատման դեպքում բարձր շեմը կարող է բերել նրան, որ կբացառվի ընտրողների զգալի մասի ներկայացուցչությունը: Իրավիճակների այս մեծ թիվը վկայում է տվյալ հարցում հնարավոր տարբերակների բազմազանության մասին: Հետևաբար, Դատարանը խնդրո

առարկա շեմը գնահատում է հաշվի առնելով այն ընտրական համակարգը, որի մաս այն կազմում է (*«Յուսակը և Սադակն ընդդեմ Թուրքիայի»* [ՄՊ], §§ 131-132):

68. Օրինակ՝ երկու այլընտրանքային պայմանների պահանջը, այն է՝ առանձին վերցված մեկ ընտրատարածքում տրված վավերական ձայների առնվազն 30%-ի ձեռքբերումը կամ ողջ ինքնավար համայնքում տրված ձայների առնվազն 6%-ի ձեռքբերումը, Դատարանը գտել է, որ նման համակարգը, չկազմելով խոչընդոտ ընտրական թեկնածությունների համար, որոշակի պաշտպանություն է նախատեսում փոքր քաղաքական կազմավորումների համար (*«Կանարյան կղզիների ազգայնական դաշնությունն ընդդեմ Բասկնիայի»* (որոշ.)): Նույն եղանակով, Դատարանը եզրակացրել է, որ ձայների թվի 5%-ի շեմը, որը թեկնածուները պետք է հատեն ազգային մակարդակով ընտրված համարվելու և խորհրդարանական տեղերի բաշխմանը մասնակցելու համար, համապատասխանում է թիվ 1 արձանագրության 3-րդ հոդվածին այնքանով, որքանով խթանում է բավականաչափ ներկայացուցչական գաղափարային հոսանքները և թույլ է տալիս խուսափել խորհրդարանի ավելորդ մասնատումից (*«Նոր դեմոկրատներ» կուսակցությունը և «Մեր հող» կուսակցությունը ընդդեմ Լատվիայի»* (որոշ.)):

69. *«Շտրակը և Ռիխտերն ընդդեմ Գերմանիայի»* գործով կայացրած որոշմամբ Դատարանը հիշեցրել է իր նախադեպային իրավունքն ընտրական անցողիկ շեմերի վերաբերյալ Կոնվենցիայի դրույթների ներքո (§ 33): Բացի այդ, Դատարանը առաջին անգամ արտահայտվել է ընտրական անցողիկ շեմերի հարցի առնչությամբ թիվ 1 արձանագրության 3-րդ հոդվածի ակտիվ հայեցակետի ներքո, քանի որ տվյալ գործի շրջանակներում որպես դիմումատու հանդես են եկել ընտրողները: Եվ իրականում, դիմումատուները բողոքում էին ազգային մակարդակով տրված ձայների 5-տոկոսանոց շեմի վերաբերյալ, որը քաղաքական կուսակցությունը պետք է հատեր Եվրոպական խորհրդարանում Գերմանիային վերապահված տեղերից մեկին հավակնելու համար: 2011 թվականին Գերմանիայի Սահմանադրական դատարանը հռչակեց, որ այս օրենսդրական դրույթը հակասում է հիմնարար օրենքին՝ բայց և այնպես, ուժը կորցրած չհամարելով 2009 թվականի ընտրությունների արդյունքները: Ստրասբուրգի դատարանը մերժեց դիմումը համարելով, որ տվյալ միջամտությունը եղել է համաչափ հետապնդվող օրինական նպատակին (խորհրդարանական կայունության պահպանումը)՝ հաշվի առնելով տվյալ հարցում պետություններին վերապահված հայեցողության լայն լուսանցքը: Դատարանը հայտարարեց, որ Եվրոպական Միությունը միանշանակ թույլ է տալիս անդամ պետություններին ամրագրել ընտրությունների անցողիկ շեմերը մինչև տրված ձայների 5%-ի չափով, ինչպես նաև նշեց, որ զգալի թվով անդամ պետություններ օգտվում էին տվյալ հնարավորությունից:

70. *«Ֆրիզների կուսակցությունն ընդդեմ Գերմանիայի»* գործի շրջանակներում խոսքը գնում էր Ստոքին Սաքսոնիայի մարզի կողմից խորհրդարանական տեղերի ստացման համար տրված ձայների 5-տոկոսանոց շեմը հատելու պահանջի մասին: Դիմումատուն, որը տվյալ մարզում փոքրամասնություն կազմող խմբի շահերը ներկայացնող քաղաքական կուսակցություն էր, պնդում էր, որ նշված շեմի կիրառումը հանգեցրել է ընտրություններին խտրականությունից զերծ մասնակցելու իր իրավունքի խախտմանը և պահանջել է ազատվել նշված պահանջից: Խնդրո առարկա հարցը եղել է ընտրական համատեքստում փոքրամասնությունների պաշտպանության համար անդամ պետությունների վրա դրված պարտավորությունների տարածման ոլորտը: Դատարանը գտել է, որ նույնիսկ հանրային հարցերում ազգային փոքրամասնությունների մասնակցության կարևորությունն ընդգծող 1998 թվականի Ազգային փոքրամասնությունների պաշտպանության վերաբերյալ շրջանակային կոնվենցիայի

լույսի ներքո մեկնաբանվելու պարագայում՝ Կոնվենցիան չի հրահանգում, որ փոքրամասնության շահերը ներկայացնող կուսակցությունները պետք է արժանանան առավել նպաստավոր վերաբերմունքի: Դատարանը եզրակացրել է, որ Կոնվենցիայի 14-րդ հոդվածի՝ թիվ 1 արձանագրության 3-րդ հոդվածի համադրությամբ խախտում տեղի չի ունեցել:

71. Փոխարենը՝ *«Յուսակը և Սադակն ընդդեմ Թուրքիայի»* [ՄՊ] գործի շրջանակներում Դատարանը գտել է, որ ընդհանուր առմամբ 10%-ի նախընտրական շեմը չափից դուրս բարձր է և միացել է Եվրոպայի խորհրդի մարմինների առաջարկություններին, որոնցով հայցվում էր իջեցնել այդ շեմը: Նշված շեմը պարտադրում էր քաղաքական կուսակցություններին դիմել այնպիսի հնարքների, որոնք չեն նպաստում ընտրական գործընթացի թափանցիկությանը: Այնուամենայնիվ, հաշվի առնելով խնդրո առարկա ընտրություններին ներհատուկ քաղաքական համատեքստը, մի շարք շտկումները և այլ երաշխիքները, օրինակ՝ այլ քաղաքական կազմավորումների հետ ընտրական կոալիցիա ստեղծելու հնարավորությունը կամ Սահմանադրական դատարանի դերակատարումը, որոնք անդրադառնում են դրանց գործնական հետևանքներին, Դատարանն իրեն համոզված չի համարել, որ խնդրահարույց 10%-ի շեմը արդյունքում խոչընդոտել է թիվ 1 արձանագրության 3-րդ հոդվածով երաշխավորված իրավունքների էությունը:

72. *«Սերնեան ընդդեմ Ռումինիայի»** գործի շրջանակներում խոսքը գնում էր արդեն իսկ խորհրդարանում չներկայացված կուսակցությունների անդամների վրա դրված մասնակի ընտրություններին որպես թեկնածու առաջադրվելու արգելքի մասին: Դիմումատուն պնդում էր, որ այս առնչությամբ տեղ է գտել խտրականություն արդեն իսկ ներկայացված կուսակցություններին պատկանող թեկնածուների առնչությամբ: Դատարանը գտավ, որ հետապնդվող նպատակը, այն է՝ պահպանել խորհրդարանի կառուցվածքը և խուսափել այն կազմող քաղաքական ուղղությունների մասնատումից, կարող է հիմնավորել վիճահարույց սահմանափակումը (§ 49): Դատարանը եզրակացրեց, որ արտահերթ ընտրություններին առաջադրվելու դիմումատուի իրավունքի վրա դրված սահմանափակումը եղել է ողջամտության սահմաններում, մասնավորապես՝ հաշվի առնելով այն հանգամանքը, որ այս արտահերթ ընտրությունները կազմակերպված են եղել միայն մեկ պատգամավորական աթոռի համար, իսկ դիմումատուն հնարավորություն էր ունեցել առաջադրվել դրան նախորդող ընդհանուր ընտրություններին (§§ 50-51):

73. Եվ վերջապես, ձայների հաշվարկի կանոնների կտրուկ և անկանխատեսելի փոփոխությունը կարող է խախտել թիվ 1 արձանագրության 3-րդ հոդվածի դրույթները: Ընտրական քանոթի հաշվարկի վերաբերյալ հատուկ Գերագույն դատարանի կողմից իր ձևավորված նախադեպային իրավունքի հիմնովին փոփոխվելու հետևանքով իրենց խորհրդարանական տեղերից զրկված ընտրյալ պատգամավորների առնչությամբ Դատարանը եզրակացրել է, որ տեղի է ունեցել այս դրույթի խախտում: Դատարանը, մասնավորապես, հաշվի է առել, որ նախադեպային իրավունքի այս փոփոխությունը, որը հաջորդել է ընտրություններին, փոխել է ձեռնպահ քվեների իմաստն ու կշիռը և, հետևաբար, իր բնույթով փոխել է ընտրողների արտահայտված կամքը: Բացի այդ, այդ փոփոխությունը տարաձայնություններ է առաջացրել պատգամավորների ընտրության եղանակում (*«Պաշալիդիսը, Կուտմերիդիսը և Ջահարկիսն ընդդեմ Հունաստանի»*):

Դ. Այլ օրինական նպատակներ

74. Թեև դրանք չեն սահմանափակվում Կոնվենցիայի 8-ից 11-րդ հոդվածների շրջանակներում բերված սպառիչ ցանկով, բազմաթիվ այլ օրինական նպատակներ կարող

են ընդունվել Դատարանի կողմից ընտրություններին առաջադրվելու իրավունքի խոչընդոտը հիմնավորելու համար:

75. Այսպիսով, Դատարանը տարբերություն է արձանագրել պետության նկատմամբ հավատարմության և կառավարության նկատմամբ հավատարմության միջև: Թեև պետության նկատմամբ հավատարմության ապահովման կարիքը կազմում է այնպիսի օրինական նպատակ, որով հիմնավորվում են ընտրական իրավունքների վրա դրված սահմանափակումները, սակայն նույնը չի կարելի ասել կառավարության նկատմամբ հավատարմության մասին (*«Տանասեն ընդդեմ Մոլդովայի»* [ՄՊ], § 166): Միաժամանակ, պաշտոնական լեզվի բավարար իմացություն ունենալու պարտավորությունը կարող է հետապնդել օրինական նպատակ (*«Պողկոլզինան ընդդեմ Լատվիայի»*): Դատարանը նաև եզրակացրել է, որ խորհրդարանական ընտրություններին առաջադրվող թեկնածուների վրա դրված իրենց աշխատանքի և կուսակցական պատկանելիության վերաբերյալ ճշգրիտ տեղեկություններ ներկայացնելու պարտավորությունը թույլ է տալիս ընտրողներին կատարել իրազեկված ընտրություն՝ կախված տվյալ թեկնածուի մասնագիտական և քաղաքական դիրքորոշումից, ուստիև այն իրենից ներկայացնում է օրինական նպատակ (*«Կրասնովը և Սկուրատովն ընդդեմ Ռուսաստանի»*): Փոխարենը՝ թեկնածուին ընտրվելու իրավունքից զրկելը՝ իր կողմից ներկայացված փաստաթղթի ձևաբանական թերության պատճառով, համաչափ չէ հետապնդվող օրինական նպատակին (*նույն տեղում*, §§ 65-66):

76. Դատարանը նաև անընդունելի է համարել մի բողոք, որով վիճարկվում էր խիստ ավանդապաշտ բողոքական քաղաքական կուսակցության վրա դրված իր ընտրացուցակները կանանց համար բացելու պարտավորությունը: Դատարանը այնուհետև հիշեցրեց, որ սեռերի միջև հավասարության ուղղությամբ առաջադիմությունն անդամ պետություններում թույլ չի տալիս պետությանը համաձայնվել այն մտքի հետ, որ տղամարդը առաջնային, իսկ կինը երկրորդական դերակատարում ունեն հասարակությունում (*«Բարեփոխված պետական կուսակցությունն ընդդեմ Նիդեռլանդների»* (որոշ.)):

77. Բացի այդ, *«Մելնիչենկոն ընդդեմ Ուկրաինայի»* գործով դիմումատուն, ով ծագումով ուկրաինացի էր և որպես փախստական գտնվում էր Միացյալ Նահանգներում, մերժում էր ստացել Ուկրաինայի խորհրդարանական ընտրություններում իր թեկնածության գրանցման վերաբերյալ այն պատճառաբանությամբ, որ նա կեղծ տեղեկություններ է հայտնել իր բնակության վայրի վերաբերյալ: Եվ իրականում, գործող օրենսդրության համաձայն, նա տրամադրել էր այն տեղեկությունները, որոնք զետեղված էին իր ներքին անձնագրում, որը դեռևս նրա մոտ էր, որում որպես բնակության վայր նշված էր Ուկրաինան: Դատարանն ընդունեց, որ թեկնածուների գրանցման համար բնակության պայմանը կարող էր ընդունելի լինել: Այդուհանդերձ, Դատարանը նշեց, որ դիմումատուն կատարել է ներպետական օրենսդրության պահանջը, ըստ որի չէր պահանջվում շարունակական բնակություն երկրի տարածքում: Բացի այդ, վերջինս գտնվում էր այնպիսի իրավիճակում, որում նա կ'ավերակարող էր մնալ Ուկրաինայում՝ վտանգելով իր ֆիզիկական անձեռնմխելիությունը, ինչն էլ անհնար կդարձներ նրա քաղաքական իրավունքների իրացումը, կ'ավերակարող էր լքել երկիրը և այլևս չներկայացնել իր թեկնածությունն ընտրություններին: Հետևաբար, Դատարանը եզրակացրեց, որ տեղի է ունեցել թիվ 1 արձանագրության 3-րդ հոդվածի խախտում:

78. Եվ վերջապես, *«Անտոնենկոն ընդդեմ Ռուսաստանի»* գործով դատական մարմինը դիմումատուին արգելել էր իր թեկնածությունն առաջադրել խորհրդարանական ընտրություններին քվեարկության նախօրեին ֆինանսական խախտումների և անարդար

ընտրարշավի պատճառաբանությամբ: Դիմումատուի բողոքը նույնիսկ չէր վերաբերում նրա թեկնածության չեղարկմանը, այլ նրան, որ չեղարկումն իրականացվել էր ընտրատեղամասերի բացումից շատ կարճ ժամանակ առաջ: Դատարանը գտավ, որ այդ ժամկետը համապատասխանում էր ազգային օրենսդրությանը և որևէ հետևանք չի ունեցել հնարավոր բողոքարկման վրա, քանի որ իրավական պաշտպանության ոչ մի միջոց հնարավոր չի եղել:

79. Դատարանը բազմիցս ընդունել է նաև, որ հնարավոր թեկնածուները կարող են հեռացվել իրենց զբաղեցրած պաշտոնների բերումով: *«Գիտոնասը և այլք ընդդեմ Հունաստանի»* գործով օրենսդրությունը հանրային ծառայության պաշտոններ զբաղեցնող որոշ անձանց կատեգորիաներին, այդ թվում վարձատրվող հանրային ծառայողներին, ինչպես նաև հանրային իրավունքի ներքո գործող իրավաբանական անձանց և պետական ձեռնարկությունների գործակալներին արգելում էր առաջադրվել ընտրություններին և ընտրվել ցանկացած ընտրատարածքում, որտեղ նրանք իրականացրել են իրենց գործառույթները երեք ամսից ավել ժամկետով ընտրություններին նախորդող երեք տարիների ընթացքում, ընդ որում, ընտրություններին մասնակցելու այս արգելքը չէր կարող վերացվել շահագրգիռ անձի նախօրոք հրաժարականի միջոցով, ինչպես նախատեսված է եղել պետական պաշտոնյաների որոշ այլ կատեգորիաների պարագայում: Դատարանը գտավ, որ նշված միջոցը հետապնդում էր երկակի նպատակ, այն է՝ ապահովել տարբեր քաղաքական միտումներ ունեցող թեկնածուների միջև ազդեցության գործիքների հավասարությունը և գերծ պահել ընտրազանգվածը հանրային պաշտոններ զբաղեցնող անձանց ճնշումներից: Հաջորդ տարում Դատարանը վերահաստատեց, որ տեղական վարչական մարմինների բարձրաստիճան պաշտոնյաների կողմից որոշ տեսակի գործունեությունում մասնակցելու վրա դրված սահմանափակումները հետապնդում էին օրինական նպատակ, այն է՝ պաշտպանել այլոց՝ տեղական մարմինների անդամների և ընտրողների իրավունքները և ապահովել տեղական մակարդակով իսկապես ժողովրդավարական քաղաքական վարչակարգ: Այն հանգամանքը, որ նշված միջոցները կիրառվում էին միայն այնքան ժամանակ, որքան խնդրո առարկա անձինք զբաղեցնում էին սահմանափակումների ենթակա պաշտոնները, քաղաքական առումով թույլ էր տալիս ապահովել դրանց համամասնությունը (*«Անվեդ և այլք ընդդեմ Միացյալ Թագավորության»*): *«Բրիքեն ընդդեմ Լատվիայի»* գործի շրջանակներում Դատարանը հավելեց, որ պաշտոնյաների ընտրություններին մասնակցելու արգելքն իրենից ներկայացնում է հանրային ծառայության անկախության պահանջին համաչափ արձագանք, մանավանդ, որ նույնն էլ վերաբերվում էր դատավորների վրա դրված ընտրվելու արգելքին, ինչը նպատակ ուներ երաշխավորել, որ ամբաստանյալների իրավունքները պաշտպանված կլինեն Կոնվենցիայի 6-րդ հոդվածով: Հետևաբար, Դատարանը եզրակացրել է, որ տեղի չի ունեցել որևէ ոտնձգություն երաշխավորված իրավունքների բովանդակության նկատմամբ, քանի որ դատավորը հնարավորություն է ունեցել հրաժարական տալ իր պաշտոնից ընտրություններին որպես թեկնածու առաջադրվելու համար:

80. *«Դյուպրեն ընդդեմ Ֆրանսիայի»* գործով կայացրած որոշումը վերաբերում էր 2011 թվականին Եվրոպական խորհրդարանում երկու ֆրանսիացի լրացուցիչ ներկայացուցիչների ընտրությանը, ասել է թե՛ օրենսդրի լիազորությունների ժամկետի ավարտից առաջ, Լիսաբոնի պայմանագրի ուժի մեջ մտնելու հետևանքով: Հնարավոր երեք տարբերակներից Ֆրանսիայի կառավարությունն ընտրեց Ազգային ժողովի կողմից իր անդամների թվից նոր եվրոպական պատգամավորներ նշանակելու տարբերակը, ինչը թույլ չտվեց դիմումատուին ներկայացնել իր թեկնածությունը: Դատարանն ընդունեց, որ այսպես ընտրված նշանակման եղանակը համապատասխանում էր օրինական

նպատակի՝ հաշվի առնելով թույլ մասնակցության, ընդամենը երկու տեղի համար մեծ ծախսերի, ինչպես նաև կազմակերպչական բարդության վտանգը (§ 25): Հաշվի առնելով նշված միջոցի սահմանափակ բնույթը՝ Դատարանը գտավ, որ այն անհամաչափ չի եղել հետապնդվող օրինական նպատակին:

81. Այդուհանդերձ, ընտրություններին որպես թեկնածու առաջադրվելու իրավունքի վրա դրված սահմանափակումները, նույնիսկ եթե դրանք հետապնդում են օրինական նպատակ, չպետք է արդյունքում հանգեցնեն այդ իրավունքի չեղարկմանը՝ կա՛մ այն պատճառով, որ համապատասխան պայմանները մտցվել են չափազանց ուշ կա՛մ անակնկալ կերպով, կա՛մ էլ այն պատճառով, որ դրանք բավականաչափ պարզ չեն եղել: *«Լիկուրեզոսն ընդդեմ Հունաստանի»* գործով թեկնածուների մասնագիտական անհամատեղելիությունը սահմանող փաստաթուղթն անմիջապես կիրառվեց օրենսդրի ընթացիկ լիազորությունների ավարտից առաջ, և պատգամավորները գրկվեցին իրենց մանդատից, թեև այդ նոր պայմանը գոյություն չուներ նրանց ընտրության պահին: Ընդ որում, որևէ հրամայական պատճառ չէր հիմնավորում նման բացարձակ անհամատեղելիության կիրառումը: Առաջին անգամ Դատարանը վկայակոչեց օրինական վստահության սկզբունքը և, հետևաբար, եզրակացրեց, որ տեղի է ունեցել թիվ 1 արձանագրության 3-րդ հոդվածի խախտում: Դատարանը կրկին այս սկզբունքը կիրառեց *«Էկոզլաստոստն ընդդեմ Բուլղարիայի»* գործի շրջանակներում: Թեև ընտրական օրենսդրության մեջ մտցված երեք նոր պայմաններից ոչ մեկն ինքնին խնդրահարույց չէր, սակայն դրանց ներդրման պատճառով դիմումատու կուսակցությունը միայն մեկ ամիս է ունեցել այդ պայմանները բավարարելու համար: Ընդ որում, Դատարանը համարել է, որ քաղաքական կազմավորումների վրա ընտրություններին մասնակցության վերաբերյալ դրված պայմանները հիմնարար ընտրական կանոնների մաս են կազմում: Հետևաբար, դրանք պետք է օգտվեին նույն ժամանակային կայունությունից, ինչ ընտրական համակարգի այլ հիմնարար տարրերը: Դատարանը նաև գտավ, որ այն դրույթները, որոնց հիման վրա նախկին հոգևորականի թեկնածությունը մերժվել էր, չափից ավելի անորոշ էին և այդ իսկ պատճառով՝ անկանխատեսելի: Հետևաբար, այդ դրույթներն ընտրական մարմիններին տալիս էին սեփական հայեցողության չափից մեծ լուսանցք և ավելորդ տեղ էին թողնում կամայականության համար նշված սահմանափակման կիրառման հարցում (*«Սեյիդզադեն ընդդեմ Ադրբեյջանի»*):

Ե. Ընտրարշավի վերաբերյալ

82. Թիվ 1 արձանագրության 3-րդ հոդվածով երաշխավորված իրավունքների արդյունավետ լինելու համար դրանց պաշտպանությունը չպետք է սահմանափակվի միայն թեկնածության առաջադրման գործընթացով: Ուստի, ընտրարշավը նույնպես ընդգրկված է նշված հոդվածի կիրառման ոլորտում:

83. Կոնվենցիայի 10-րդ հոդվածին վերաբերող բազմաթիվ գործերում Դատարանն արդեն ընդգծել է ազատ ընտրությունների և ազատ արտահայտվելու իրավունքի միջև եղած փոխկախյալությունը: Դատարանն արձանագրել է, որ այս իրավունքները, մասնավորապես՝ քաղաքական բանավեճի ազատությունը, ցանկացած ժողովրդավարական վարչակարգի հիմքն են կազմում: Այս երկու իրավունքները փոխկախյալ են և ամրապնդում են միմյանց, օրինակ՝ ազատ արտահայտվելու իրավունքը այն «պայմաններից մեկն է, որը ապահովում է ժողովրդի կամքի ազատ արտահայտումն օրենսդիր իշխանության ընտրության հարցում»: Ահա, թե ինչու առանձնապես կարևոր է նախընտրական ժամանակահատվածում թույլ տալ ամեն տեսակի կարծիքների և

տեղեկությունների ազատ շրջանառությունը (*«Բռուսանն ընդդեմ Միացյալ Թագավորության»*, § 42):

84. Հիմք ընդունելով այս փոխկախյալությունը՝ ընտրարշավներին վերաբերող բազմաթիվ գործեր քննության են առնվում Կոնվենցիայի 10-րդ հոդվածի տեսանկյունից: Օրինակ՝ Դատարանը եզրակացրել է, որ տեղի է ունեցել 10-րդ հոդվածի խախտում, քանի որ հեռուստատեսության վրա դրվել էր տուգանք մի փոքր քաղաքական կուսակցության գովազդը եթեր հեռարձակելու համար, չնայած նրան, որ օրենսդրությամբ արգելվում էր հեռուստատեսությամբ ցանկացած քաղաքական գովազդը (*««Թիվի Վեստ ԱՍ» և Ռուզանի կենսաթոշակային կուսակցությունն ընդդեմ Նորվեգիայի»*): Եվ ընդհակառակը՝ Դատարանը 10-րդ հոդվածի մասով որևէ խնդիր չի արձանագրել ընտրական շրջանում ուղիղ եթերով հեռարձակվող հեռուստահաղորդման ժամանակ իր հակառակորդի հասցեին հնչեցրած «գող» արտահայտության համար ընտրական հանձնաժողովի կողմից մի կին քաղաքական գործչին տրված նախազգուշացման պարագայում (*«Վիտրենկոն և այլք ընդդեմ Ուկրաինայի»*):

85. Այնուամենայնիվ, հատկապես ընտրական շրջանում եթերային ժամանակի բաշխմանն առնչվող գործերը կարող են խնդրահարույց լինել թիվ 1 արձանագրության 3-րդ հոդվածի տեսանկյունից: Տարբեր թեկնածուներին տրամադրված եթերային ժամանակի հավասարությանն առնչվող մի գործում, Դատարանը հայտարարեց, որ թեև թիվ 1 արձանագրության 3-րդ հոդվածով բոլոր քաղաքացիների նկատմամբ հավասար վերաբերմունքի սկզբունքը գտնվում է վերջիններիս ընտրական իրավունքների իրացման շրջանակներում, սակայն այն չի երաշխավորում նախընտրական շրջանում ռադիոյով կամ հեռուստատեսությամբ, որպես այդպիսին, եթերային ժամանակ ստանալու որևէ իրավունք որևէ քաղաքական կուսակցության համար: Այդուհանդերձ, խնդիր կարող է ծագել բացառիկ հանգամանքներում, օրինակ, եթե ընտրությունների շրջանում որևէ քաղաքական կուսակցությունների համար բոլոր տեսակի հաղորդումները մերժվում են, մինչդեռ այլ կուսակցությունները ստանում են եթերային ժամանակ (*«Նոր դեմոկրատներ» կուսակցությունը և «Մեր հող» կուսակցությունն ընդդեմ Լատվիայի»* (որոշ.)):

86. *«Ռուսաստանի կոմունիստական կուսակցությունը և այլք ընդդեմ Ռուսաստանի»* գործի շրջանակներում Դատարանը քննել էր այն հարցը, թե արդյոք թիվ 1 արձանագրության 3-րդ հոդվածի ներքո պետությունը կրում էր դրական պարտավորություն և պետք է համոզվեր, որ լուսաբանումն իր կողմից վերահսկվող լրատվամիջոցների կողմից եղել է «անկողմնակալ և ազատ ընտրությունների» ոգուն համահունչ՝ նույնիսկ դիտավորյալ մեքենայության մասին վկայող ուղղակի ապացույցների բացակայության դեպքում: Դատարանը գտել է, որ տվյալ դեպքում ընտրական ոլորտում իրավական պաշտպանության միջոցների առկա համակարգը եղել է բավարար՝ պետության վրա դրված ընթացակարգային բնույթի դրական պարտավորությունը կատարելու իմաստով: Ինչ վերաբերում է պարտավորության նյութական հայեցակետին և այն պնդմանը, որ պետությունը պետք է ապահովեր տեսաձայնային լրատվամիջոցների չեզոքությունը, Դատարանը գտավ, որ միջոցներ են ձեռնարկված եղել հեռուստատեսությամբ ընդդիմադիր կուսակցությունների և թեկնածուների որոշակի տեսանելիությունը երաշխավորելու, ինչպես նաև խմբագրական անկախությունը և լրատվամիջոցների չեզոքությունն ապահովելու համար: Անշուշտ, նշված միջոցները հավանաբար չեն ապահովել փաստացի հավասարություն, սակայն Դատարանն ապացուցված չի համարել այն հանգամանքը, որ պետությունը չի կատարել

իր դրական պարտավորությունները տվյալ հարցում այնքանով, որքանով դա կառաջացներ թիվ 1 արձանագրության 3-րդ հոդվածի խախտում:

87. *«Օրանն ընդդեմ Թուրքիայի»* գործի շրջանակներում դիմումատուն բողոք էր ներկայացրել առ այն, որ ի տարբերություն քաղաքական կուսակցությունների՝ նա որպես անկախ թեկնածու իր ընտրական քարոզչության շրջանակներում հնարավորություն չի ունեցել օգտվել Թուրքիայի ողջ տարածքով հեռարձակվող ռադիոյի և հեռուստահաղորդումներից: Դատարանը գտավ, որ ի տարբերություն քաղաքական կուսակցությունների՝ դիմումատուն անկախ թեկնածու էր և կարիք ուներ ընտրողներին դիմել միայն մեկ ընտրատարածքում, որում էլ առաջադրվում էր: Բացի այդ, նրան չի արգելվել օգտագործել քարոզչության առկա այլ միջոցները, որոնք խնդրո առարկա իրադարձությունների ժամանակահատվածում հասանելի են եղել ցանկացած անկախ թեկնածուի համար: Հետևաբար, Դատարանը եզրակացրեց, որ թիվ 1 արձանագրության 3-րդ հոդվածի խախտում տեղի չի ունեցել:

88. Եվ վերջապես, *«Ուսպակիչն ընդդեմ Լիտվայի»* գործի շրջանակներում հանդես եկող դիմումատուն, ով քաղաքական գործիչ էր, բողոք էր ներկայացրել առ այն, որ նրա նկատմամբ կիրառված տնային կալանքը (որը պայմանավորված էր քաղաքական կոռուպցիայի գործով քրեական քննությամբ) նրան թույլ չի տվել մասնակցել խորհրդարանական ընտրություններին՝ այլ թեկնածուների հետ հավասար հիմունքներով: Եզրակացնելով, որ թիվ 1 Արձանագրության 3-րդ հոդվածի խախտում տեղի չի ունեցել, Դատարանը, մասնավորապես, նշել է, որ ցանկության դեպքում դիմումատուն կարող էր իր ընտրարշավն անցկացնել իր տանից: Հաշվի առնելով, որ այդ պահին նա հանդիսանում էր հայտնի քաղաքական գործիչ, և նրա կուսակցության անդամներն անձամբ մասնակցել են ընտրողների հետ հանդիպումներին, ուստի, տնային կալանքը չէր սահմանափակել ընտրություններին մասնակցելու դիմումատուի իրավունքն այնքանով, որքանով դա կանդրադառնար ընտրությունների վերջնական արդյունքներին: Բացի այդ, ներպետական իրավական դրույթներով նախատեսվում էր բողոքների քննության համակարգ և իրավական պաշտպանության անհատական միջոցներ ընտրական ոլորտում, որոնցից էլ դիմումատուն լիարժեք օգտվել է:

2. Մանդատի իրացում

89. 1984 թվականից ի վեր, Մարդու իրավունքների եվրոպական հանձնաժողովը հայտարարել է, որ որպես թեկնածու առաջադրվելու անձի իրավունքը բավարար չէ, պետք է նախատեսվի նաև ընտրությունները հաղթելուց հետո խորհրդարանական աթոռ զբաղեցնելու իրավունք: Հակառակ դիրքորոշում զբաղեցնելու դեպքում՝ ընտրություններին որպես թեկնածու առաջադրվելու իրավունքը կիմաստագրվել էր (*«Մ.-ն ընդդեմ Միացյալ Թագավորության»*, Հանձնաժողովի որոշում): Նույն գործի շրջանակներում, Դատարանը, այդուհանդերձ, գտավ, որ խորհրդարանական աթոռ զբաղեցնելու ընտրյալի անհնարությունն այն պատճառաբանությամբ, որ նա արդեն մեկ այլ օտարերկրյա օրենսդիր մարմնի անդամ էր, հանդես էր գալիս որպես թիվ 1 արձանագրության 3-րդ հոդվածի դրույթների հետ համատեղելի սահմանափակում:

90. Ընդդեմ Թուրքիայի բերված երեք գործերի շրջանակներում Դատարանը հնարավորություն է ունեցել քննության առնել ընտրյալների վրա անդրադարձող հետևանքներն այն քաղաքական կուսակցությունների լուծարման դեպքում, որոնց վերջիններս պատկանում էին: *«Մադակը և այլք ընդդեմ Թուրքիայի» (թիվ 2)* գործում քաղաքական կուսակցությունը լուծարվել էր պետության տարածքային ամբողջականության և միասնության նկատմամբ ռսնձգություն կատարելու պատճառով:

Այդ կուսակցությունից ընտրված պատգամավորներն ավտոմատ կերպով զրկվել էին իրենց խորհրդարանական մանդատներից: Դատարանը գտավ, որ ընդդիմադիր խորհրդականի ազատ արտահայտվելու իրավունքի նկատմամբ միջամտությունը պահանջում էր առավելագույն հսկողություն: Ընդ որում, դիմումատուների զրկումն իրենց խորհրդարանական մանդատներից իրականացվել է ավտոմատ կերպով և պայմանավորված չի եղել անձամբ նրանց կողմից իրականացված քաղաքական գործունեությամբ: Ուստի, խոսքը գնում էր ծայրահեղ խիստ միջոցի մասին, որը անհամաչափ էր վկայակոչվող ցանկացած օրինական նպատակին:

91. *«Կավաքչին ընդդեմ Թուրքիայի»* գործով ժամանակավոր սահմանափակումներ էին դրվել դիմումատուի քաղաքական իրավունքների վրա այն կուսակցության վերջնական լուծարման պատճառով, որին նա անդամակցում էր: Դատարանը գտավ, որ այս միջոցները նպատակ ունեին պահպանել Թուրքիայի քաղաքական վարչակարգի աշխարհիկ բնույթը, և հաշվի առնելով այս սկզբունքը Թուրքիայում ժողովրդավարական վարչակարգի համար՝ նշված միջոցը հետապնդում էր հասարակական կարգի և այլոց իրավունքների և ազատությունների պաշտպանության օրինական նպատակներ: Իսկ ինչ վերաբերում է նշված պատժամիջոցի համամասնությանը, ապա քաղաքական կուսակցության լուծարման վերաբերյալ այդ պահին գործող սահմանադրական դրույթներն ունեին կիրառման շատ լայն տիրույթ: Կուսակցության անդամների բոլոր գործողությունները և ելույթները կարող էին վերագրվել կուսակցությանը՝ համարելով, որ վերջինս հանդես է գալիս որպես Սահմանադրությանը հակասող գործունեության կենտրոն և որոշում կայացնել դրա լուծարման մասին: Չէր նախատեսվում վիճահարույց գործունեությունում անդամների ներգրավման տարբեր աստիճանների որևէ զանազանում: Բացի այդ, կուսակցության որոշ անդամներ, այդ թվում կուսակցության նախագահն ու փոխնախագահը, ովքեր գտնվում էին դիմումատուի հետ համեմատելի իրավիճակում, որևէ պատժամիջոց չեն կրել: Հետևաբար, Դատարանը եզրակացրել է, որ նշված պատժամիջոցը չի եղել համաչափ, և տեղի է ունեցել թիվ 1 արձանագրության 3-րդ հոդվածի խախտում:

92. Մեկ այլ գործում, որը վերաբերում էր նույն կուսակցության պատգամավորին իր մանդատից զրկելուն, Դատարանը կրկին եզրակացրեց, որ տեղի է ունեցել թիվ 1 արձանագրության 3-րդ հոդվածի խախտում, սակայն հետաքրքրությամբ նշեց մի սահմանադրական փոփոխության ընդունումը, որով ամրապնդվում էր խորհրդարանականների կարգավիճակը և որը հավանաբար կբերեր նրան, որ մանդատից զրկումը կդառնար ավելի հազվադեպ (*«Սոբաչին ընդդեմ Թուրքիայի»*):

93. *«Լիկուրեզոսն ընդդեմ Հունաստանի»* գործի շրջանակներում Դատարանը եզրակացրեց, որ պատգամավորներին կիրառվող նոր մասնագիտական անհամատեղելիությունը չի հայտարարվել ընտրություններից առաջ և անակնկալ է դարձել ինչպես դիմումատուի, այնպես էլ նրա ընտրողների համար իր մանդատի իրացման ընթացքում: Դատարանը գտել է, որ դիտարկելով դիմումատուի ընտրությունը 2003 թվականին ուժի մեջ մտած նոր հոդվածի տեսանկյունից և հաշվի չառնելով այն հանգամանքը, որ տվյալ ընտրությունը տեղի է ունեցել 2000 թվականի ապրիլին ամենայն օրինականությամբ՝ ներպետական ատյանի դատավորը զրկել է շահագրգիռ անձին իր խորհրդարանական գործառույթներից և զրկել է ընտրողներին մի թեկնածուից, ում նրանք ազատ և ժողովրդավարական կարգով ընտրել էին իրենց շահերը չորս տարվա ընթացքում ներկայացնելու համար՝ անտեսելով օրինական վստահության սկզբունքը: Նույն կերպ, *«Պաշալիդիսը, Կուտմերիդիսը և Չահարկիսն ընդդեմ Հունաստանի»* գործով Դատարանը համարել է, որ ընտրություններից հետո իր նախադեպային իրավունքում ընտրական

քանորդի հաշվարկի մասով կատարված անկանխատեսելի հիմնավոր փոփոխությունները հանգեցրել են բազում պատգամավորներին իրենց մանդատից զրկելուն՝ կազմելով թիվ 1 արձանագրության 3-րդ հոդվածի խախտում:

94. «Պատունվիչը և Միլիվոչնիչն ընդդեմ Սերբիայի» գործն առիթ դարձավ, որ Դատարանն իր դիրքորոշումը հայտնի խորհրդարան անցած իրենց անդամների կողմից նախապես ստորագրված դատարկ հրաժարականներն օգտագործելու միտում ունեցող որոշ քաղաքական կուսակցությունների գործելակերպի վերաբերյալ հայտարարելով, որ կուսակցությունները նման եղանակով կարող էին դադարեցնել իրենց անդամների մանդատը ցանկացած պահին և նրանց կամքին հակառակ: Դատարանը նախ և առաջ համարել է, որ տվյալ դեպքում թեև հրաժարականի դիմումը ներկայացվում է կուսակցության կողմից, սակայն մանդատը դադարեցնողը խորհրդարանն է: Այսպիսով, ընդունելով վերոհիշյալ հրաժարականի դիմումը՝ պատգամավորին իր մանդատից զրկողը պետությունն է: Ուստի, իրենց մանդատներից զրկված պատգամավորների դիմումը ընդունելի էր անձնական նկատառումներով (*ratione personae*): Դատարանն այնուհետև արձանագրել է, որ այս վիճահարույց գործելակերպը հակասում էր ներպետական օրենսդրական դրույթներին, ըստ որոնց հրաժարականը պետք է անձամբ ներկայացվեր խնդրո առարկա պատգամավորի կողմից: Դատարանն այսպիսով եզրակացրեց, որ տեղի է ունեցել թիվ 1 արձանագրության 3-րդ հոդվածի խախտում: Փոխարենը՝ «Օկետոն ընդդեմ Բոսնիայի» գործով որոշումը վերաբերում էր եվրոպացի պատգամավորի կողմից իր մանդատից կամավոր հրաժարվելուն: Իր անդամակցած քաղաքական շարժման համահիմնադրի հետ ունեցած համաձայնության արդյունքում իր խորհրդարանական տեղից հրաժարվելու մասին դիմումը ստորագրելուց հետո, դիմումատուն հրաժարվեց սեփական խոսքերից: Այդուհանդերձ, ցուցակում ընդգրկված հաջորդ թեկնածուն արդեն ստանձնել էր խնդրո առարկա մանդատը: Դատարանը հաստատեց, որ ընտրությունների արդյունքում թեկնածուն կարող է ձեռք բերել օրենսդիր մարմնում տեղ զբաղեցնելու իրավունք, սակայն, այդուհանդերձ, նրա վրա նման պարտականություն չի դրվել: Եվ իրականում, ցանկացած թեկնածու կարող է քաղաքական կամ անձնական նկատառումներով հրաժարվել իր ստացած մանդատից, ընդ որում նման հրաժարականի դիմելու որոշումը չի կարող համարվել համընդհանուր ընտրական իրավունքի սկզբունքին հակասող: Դատարանը լրացրեց, որ դիմումատուի կողմից իր հրաժարականի դիմումից հրաժարվելը չընդունելու հանգամանքը հետապնդում էր օրինական նպատակներ և կոչված էր երաշխավորել իրավական պաշտպանությունն ընտրական գործընթացի շրջանակներում, ինչպես նաև պաշտպանել այլոց, մասնավորապես՝ հաջորդ թեկնածուի իրավունքները: Բացի այդ, դիմումատուն իր ցանկությունն արտահայտել էր գրավոր միանշանակ ձևակերպումներով, ընդ որում՝ նշելով, որ իր հրաժարումը վերջնական էր: Վերջին հաշվով, Եվրոպական Միության իրավական նորմերին համապատասխանող ներպետական ընթացակարգը նրան թույլ էր տալիս ներկայացնել փաստարկներ, որոնք նա օգտակար կհամարեր իր պաշտպանության համար: Այսպիսով, Դատարանը եզրակացրեց, որ թիվ 1 արձանագրության 3-րդ հոդվածի խախտում տեղի չի ունեցել:

IV. Քվեարկության արդյունքների մշակում

95. Քվեարկությանը հաջորդող փուլերը, այդ թվում՝ ձայների հաշվարկը, ինչպես նաև քվեարկության արդյունքների գրանցումն ու փոխանցումը, քննվել են «Դավիդովը և այլք ընդդեմ Ռուսաստանի» գործի շրջանակներում: Գործը վերաբերում էր դաշնային և

համայնքային խորհրդարանական ընտրությունների շրջանակներում ենթադրյալ խախտումներին: Դիմումատուները մասնակցել են նշված ընտրություններին տարբեր կարգավիճակով. բոլորը գրանցված են եղել ընտրացուցակներում, նրանցից ոմանք որպես թեկնածու էին առաջադրվել օրենսդիր ժողովի ընտրություններին (այնպես որ գործը միաժամանակ վերաբերում էր ազատ ընտրությունների իրավունքի ինչպես ակտիվ, այնպես էլ պասիվ հայեցակետերին), մյուսներն էլ հանդես են եկել որպես ընտրական հանձնաժողովների անդամներ կամ դիտորդներ:

96. Անդրադառնալով Վենետիկի հանձնաժողովի հանձնարարականներին՝ Դատարանը նշեց, որ քվեարկությանը հաջորդող այս փուլերը պետք է կարգավորվեն հստակ ընթացակարգային երաշխիքներով, պետք է բաց և թափանցիկ լինեն, ինչպես նաև թույլ տան բոլոր քաղաքական ուղղությունները, այդ թվում՝ ընդդիմությունը ներկայացնող դիտորդների ներկայությունը: Այդուհանդերձ, Դատարանը հիշեցրել է, որ թիվ 1 արձանագրության 3-րդ հոդվածն իրենից չի ներկայացնում ընտրական օրենսգիրք, որը կոչված է կարգավորել ընտրական գործընթացի բոլոր հայեցակետերը: Հետևաբար, Դատարանի կողմից իրականացված վերահսկողության աստիճանն այս կամ այն գործի շրջանակներում կախված է ազատ ընտրությունների իրավունքի այն հայեցակետից, որը դարձել է խնդրո առարկա: Համընդհանուր ընտրական իրավունքի սկզբունքից ցանկացած շեղում պետք է ենթարկվի խիստ հսկողության, սակայն պետությունները կարող են ստանալ սեփական հայեցողության ավելի լայն լուսանցք այն միջոցների մասով, որոնք թույլ չեն տա թեկնածուներին առաջադրվել ընտրություններին: Առավել տեխնիկական բնույթի միջոցների, օրինակ՝ ձայների հաշվարկի և արդյունքների հրապարակման հսկողությունը Դատարանի կողմից պետք է լինի ավելի ճկուն: Նշվածից հետևում է, որ ընտրական գործընթացի այս առավել տեխնիկական փուլում հասարակ սխալը կամ խախտումը ինքնին չի վկայում ընտրություններին արդարության բացակայության մասին, եթե պահպանվում են ընտրությունների անցկացման հավասարության, թափանցիկության, անկողմնակալության և անկախության ընդհանուր սկզբունքները: Ազատ ընտրությունների գաղափարը վտանգված է միայն այնպիսի ընթացակարգային խախտումների առկայության դեպքում, որոնք i) կարող են ըստ էության խեղաթյուրել ժողովրդի կամքի ազատ արտահայտումը, օրինակ, ընտրողների կյանքի լուրջ աղճատման դեպքում, ինչպես նաև ii) ներպետական մակարդակով այս առումով ձևակերպված պնդումների արդյունավետ քննության բացակայության դեպքում (պայմանով, որ Դատարանը համարի, որ ընտրողի իրավական պաշտպանության իրավունքը կարող է ենթարկվել ողջամիտ սահմանափակումների, որպիսին է, օրինակ՝ ընտրողների քվորումի սահմանումը) (§§ 283-288):

97. Այս գործի շրջանակներում, Դատարանը եզրակացրեց, որ տեղի է ունեցել թիվ 1 արձանագրության 3-րդ հոդվածի խախտում հետևյալ պատճառաբանությամբ. Դատարանը համարել է, որ դիմումատուները հիմնավոր փաստարկներ են բերել ինչպես ազգային մարմինների, այնպես էլ Դատարանի առջև առ այն, որ ընտրությունների արդարությունը լրջորեն խախտվել էր նոր ձայների հաշվարկի ընթացակարգի պատճառով (§§ 310-311): Նման խախտումն իր բնույթով կարող է հանգեցնել ընտրողների կամքի արտահայտման լուրջ խեղաթյուրման խնդրո առարկա բոլոր ընտրատարածքներում: Այնուամենայնիվ, դիմումատուները չեն կարողացել ստանալ ձայների հաշվարկի ընթացակարգի դեմ ներկայացված իրենց բողոքի արդյունավետ քննություն ազգային մարմիններում, ինչպիսիք են՝ ընտրական հանձնաժողովները, դատախազությունը, քննչական կոմիտեն և դատարանները (§§ 336-337):

V. Ընտրության արդյունքների վիճարկում

98. Ընտրության արդյունքների վիճարկումը կարևոր է: Այդուհանդերձ, այն չի կարող քննության առնվել Կոնվենցիայի 6-րդ հոդվածի տեսանկյունից, որը Դատարանը համարել է ոչ կիրառելի: Իրականում, Դատարանը եզրակացրել է, որ Ազգային ժողովի ընտրություններին որպես թեկնածու առաջադրվելու և իր մանդատը պահպանելու իրավունքը կրում է քաղաքական, այլ ոչ թե քաղաքացիական բնույթ, այնպես որ այդ իրավունքի իրացման կազմակերպման հետ կապված վեճերը դուրս են մնում 6-րդ հոդվածի 1-ին կետի կիրառման ոլորտից (*«Պիեռ-Բլոխն ընդդեմ Ֆրանսիայի»*, § 50): 6-րդ հոդվածի քրեական հայեցակետը նույնպես չի կիրառվում ընտրական կանոնների չկատարման հետ կապված պատժամիջոցների պարագայում (*նույն տեղում*, § 61): *«Գերագույն խորհրդի պատգամավորական ակումբն ընդդեմ Հայաստանի»* գործի շրջանակներում դիմումատու հասարակական կազմակերպությունը որպես դիտորդ հանդես էր եկել խորհրդարանական ընտրություններին: Կենտրոնական ընտրական հանձնաժողովի կողմից տարբեր փաստաթղթերի չներկայացման կապակցությամբ բերված վիճարկման արդյունքում, Դատարանը համարեց, որ խնդրո առարկա ընթացակարգային հարցը որոշիչ չի եղել հասարակական կազմակերպության քաղաքացիական իրավունքների համար, ուստի, չի գտնվել Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին մասի գործողության շրջանակներում:

99. Միաժամանակ, արդյունավետ իրավական պաշտպանության միջոցի բացակայությունն ընտրական գործընթացների շրջանակներում բազմիցս քննվել է Կոնվենցիայի 13-րդ հոդվածի տեսանկյունից: Դատարանը նշել է, որ ընտրական հարցերում միայն այն իրավական միջոցները, որոնք կարող են ապահովել ժողովրդավարական գործընթացի աշխատանքը կարող են համարվել արդյունավետ (*«Պետկովը և այլք ընդդեմ Բուլղարիայի»*): *«Պետկովը և այլք ընդդեմ Բուլղարիայի»* գործով հանդես եկող դիմումատուները թեկնածուների ցուցակներից հեռացվել են քվեարկության անցկացումից ընդամենը տաս օր առաջ, այն էլ՝ դրանից երեք ամիս առաջ ընդունված օրենքի հիման վրա: Ընտրացուցակներից հեռացման մասին այս որոշումները հետագայում չեղյալ են համարվել, սակայն ընտրական մարմինները կրկին դիմումատուներին թեկնածուների ցուցակներում չեն գրանցել և վերջիններս չեն կարողացել առաջադրվել ընտրություններին: Դատարանը համարել է, որ քանի որ ընտրությունների շրջանակներում առկա իրավական պաշտպանության միջոցը նախատեսում էր միայն նյութական փոխհատուցում, այն չէր կարող համարվել արդյունավետ Կոնվենցիայի 13-րդ հոդվածի իմաստով: *«Գրոսարուն ընդդեմ Ռումինիայի»* գործով Դատարանը նշել է, որ դիմումատուն, ով պարտվել էր խորհրդարանական ընտրություններին, չէր կարող որևէ դատական հսկողություն ստանալ վիճահարույց ընտրական օրենսդրական նորմի մեկնաբանության վերաբերյալ և եզրակացրել է, որ տեղի է ունեցել Կոնվենցիայի 13-րդ հոդվածի խախտում՝ թիվ 1 արձանագրության 3-րդ հոդվածի համադրությամբ: *«Պաունովիչը և Միլիվոզնիչն ընդդեմ Սերբիայի»* գործով կայացրած վճռում Դատարանը նաև եզրակացրել է, որ նման խախտում տեղի է ունեցել պատգամավորի մանդատի ապօրինի չեղարկումն արդյունավետ կերպով վիճարկելու հնարավորության բացակայությամբ (§§ 68-72):

100. Ընտրական իրավունքների հարցում բողոքների արդյունավետ քննության և անհատական իրավական պաշտպանության միջոցների համակարգի առկայությունը հանդիսանում է ազատ և արդար ընտրությունները երաշխավորող էական պայմաններից մեկը: Նման համակարգը թույլ է տալիս արդյունավետ կերպով իրացնել քվեարկելու

անհատական իրավունքը, ինչպես նաև ընտրություններին որպես թեկնածու առաջադրվելու իրավունքը: Համակարգը պահպանում է հանրության ընդհանուր վստահությունն ազգային մարմինների կողմից քվեարկության կազմակերպման նկատմամբ: Այն պետության տրամադրության տակ եղած կարևոր միջոց է, որը վերջինիս հնարավորություն է տալիս կատարել թիվ 1 արձանագրության 3-րդ հոդվածի ներքո դրված իր դրական պարտավորությունը, այն է՝ անցկացնել ժողովրդավարական ընտրություններ (*«Ուսպակիչն ընդդեմ Լիտվայի»*, § 93):

101. Իրավական պաշտպանության միջոցի առկայության դեպքում դրա հնարավոր թերությունները կարող են արձարծվել դատարանի առջև թիվ 1 արձանագրության 3-րդ հոդվածի տեսանկյունից: Նման թերությունները կարող են իրականում թիվ 1 արձանագրության 3-րդ հոդվածի խախտում կազմել, քանի որ դրանք հարցականի տակ են առնում ընտրական գործընթացի ամբողջականությունը: Ընտրվելու իրավունքից զրկելու կամ ընտրության արդյունքների վիճարկման վերաբերյալ որոշումների կայացման գործընթացը պետք է ապահովված լինի կամայականության բացառման նվազագույն երաշխիքներով (*«Դավիդովը և այլք ընդդեմ Ռուսաստանի»*, § 288): Մասնավորապես, ինդրո առարկա որոշումները պետք է կայացվեն մի մարմնի կողմից, որն կապահովի անկողմնակալության նվազագույն երաշխիքները: Միաժամանակ, այդ մարմնի սեփական հայեցողության ինքնիշխան իրավունքը չպետք է չափից ավելի մեծ լինի և պետք է օժտված լինի ճշգրտության բավարար մակարդակով, ինչպես նաև նախատեսված լինի ներպետական իրավական նորմերի դրույթներով: Եվ վերջապես, սահմանված ընթացակարգի բնույթը պետք է երաշխավորի արդար, անկողմնակալ և բավականաչափ հիմնավոր որոշում, ինչպես նաև պետք է խուսափի իրավասու մարմնի կողմից իշխանության ցանկացած չարաշահումից (*«Պողկոլզինան ընդդեմ Լատվիայի»*, § 35, *«Գովաչն ընդդեմ Ուկրաինայի»*, §§ 54-55, *«Գերիմովան ընդդեմ Ադրբեջանի»*, §§ 44-45, *«Ռիզան և այլք ընդդեմ Բուլղարիայի»*, § 144): Այդուհանդերձ, երբ Դատարանը քննության է առնում այս հարցը, այն սահմանափակվում է նրանով, որ պարզում է, թե արդյոք ներպետական մարմնի կողմից կայացված որոշումը ունեցել է կամայական, թե ակնհայտորեն անողջամիտ բնույթ (*նույն տեղում*, § 144, *«Քերիմլին և Ալիբեյլին ընդդեմ Ադրբեջանի»*, §§ 38-42, *«Դավիդովը և այլք ընդդեմ Ռուսաստանի»*, § 288):

102. Քվեարկության արդյունքների անվավեր ճանաչման մասին որոշումները պետք է համապատասխանեն ընտրողների ցանկությունների որոշման իրական անհնարությանը: (*«Գովաչն ընդդեմ Ուկրաինայի»*): *«Քերիմովան ընդդեմ Ադրբեջանի»* գործով Դատարանը համարել է, որ երկու ընտրական գործակալների կողմից կատարված կեղծիքները չէին կարող փոխել դիմումատուի կողմից հաղթած ընտրությունների վերջնական արդյունքը: Ազգային մարմինները, այդուհանդերձ, անվավեր ճանաչեցին արդյունքները՝ խախտելով ընտրական օրենսդրության ներպետական նորմերը և հաշվի չառնելով նշված կեղծիքների հետևանքների թույլ ազդեցությունը: Այս գործողություններով ազգային մարմիններն իրականում նպաստել են ընտրական գործընթացի խոչընդոտմանը: Այդ մարմինները կամայական կերպով ոտնձգություն են կատարել դիմումատուի ընտրական իրավունքների նկատմամբ՝ թույլ չտալով նրան ստանձնել խորհրդարանական գործառույթները: Նշվածից Դատարանը եզրակացրել է, որ անվավերացումը վկայում էր ընտրական գործընթացի ամբողջականության նկատմամբ արհամարհանքի մասին, որն անհամատեղելի է ազատ ընտրությունների իրավունքի ոգու հետ: Եվ իրականում, Դատարանների դերը ոչ մի դեպքում չի ենթադրում ժողովրդի կամքի արտահայտման փոփոխություն: Այսպիսով, երկու գործերի շրջանակներում (*«Բ.Զ-ն ընդդեմ Հունաստանի»*, Հանձնաժողովի որոշում և *«Բաբենկոն ընդդեմ Ուկրաինայի»* (որոշ.)) կոնվենցիոն մարմինները քննության են առել ընտրություններին պարտված թեկնածուների բողոքներն

ընտրական ընթացակարգերի անարդարության վերաբերյալ և մերժել են դրանք՝ հիմք ընդունելով քվեարկության արդյունքների վրա իրական բացասական ազդեցության բացակայությունը: «Ռիզան և այլք ընդդեմ Բուլղարիայի» գործով արտերկրում գտնվող 23 ընտրատեղամասերի արդյունքներն անվավեր էին ճանաչվել ենթադրյալ խախտումների պատճառով, ինչը, մասնավորապես, հանգեցրել է մեկ պատգամավորի մանդատի ետկանչմանը: Դատարանը միաժամանակ քննության է առել 101 ընտրողների քվեարկության իրավունքի նկատմամբ մանդատից զրկված պատգամավորի և նրա ներկայացրած կուսակցության ընտրություններին որպես թեկնածու առաջադրվելու իրավունքի նկատմամբ միջամտությունները: Դատարանը նշել է, որ բազմաթիվ ընտրատեղամասերում ընտրության արդյունքների անվավեր ճանաչման համար բերվել են միայն զուտ ձևաբանական պատճառներ: Ավելին, Դատարանի որոշման հիմքում ընկած հանգամանքները բավականաչափ պարզ և կանխատեսելի եղանակով նախատեսված չեն եղել ներպետական իրավունքում, ընդ որում չի ապացուցվել, որ դրանք կարող էին փոխել ընտրողների նախապատվությունները և կեղծել ընտրության արդյունքները: Ավելին, ընտրական օրենքը չէր նախատեսում նոր ընտրություններ կազմակերպելու հնարավորությունն այն տեղամասերում, որտեղ քվեարկության արդյունքներն անվավեր էին ճանաչվել՝ չնայած Վենետիկի հանձնաժողովի «Ընտրական գործընթացներում լավագույն գործելակերպի կանոնագրքի» առաջարկություններին, ինչը թույլ կտար համաձայնեցնել ընտրության արդյունքների անվավերացման օրինական նպատակը, այն է՝ ընտրական գործընթացի օրինականության պահպանումը և ընտրողների ու խորհրդարանական ընտրությունների թեկնածուների սուբյեկտիվ իրավունքները: Հետևաբար, Դատարանը եզրակացրել է, որ տեղի է ունեցել թիվ 1 արձանագրության 3-րդ հոդվածի խախտում: Ուստի, քվեարկության արդյունքների անվավեր ճանաչման մասին որոշումները պետք է համապատասխանեն ընտրողների ցանկությունների որոշման իրական անհնարությանը:

103. Բայց և այնպես, պետությունները պետք է հետևեն նրան, որ անհատների կողմից ընտրական խախտումների վերաբերյալ հիմնավոր բողոքներն իսկապես քննվեն, իսկ նրանց որոշումները լինեն բավարար չափով հիմնավորված:

104. Անդրադառնալով ձայների հաշվարկի հարցում լուրջ ընտրախախտումների վերաբերյալ հիմնավոր բողոքների առկայության հարցին՝ Դատարանը նշեց, որ բողոքների ներկայացման համար գոյություն ունեցող իրավական պաշտպանության միջոցները պետք է բավարար երաշխիքներ նախատեսելին կամայականության դեմ: Այսպիսով, նման տեսակի հիմնավոր բողոքների պատշաճ և բավարար քննության բացակայությունը հակասում է թիվ 1 արձանագրության 3-րդ հոդվածին («*Դավիդովը և այլք ընդդեմ Ռուսաստանի*», §§ 288 և 335): Այս գործի շրջանակներում խնդրո առարկա ոչ մի մարմին՝ ընտրական հանձնաժողով, դատախազություն, դատարաններ, չի ստանձնել դիմումատուների կողմից վիճարկվող իրողությունների հիմքում ընկած պատճառների իրական քննությունը:

105. Մասնավորապես, հիմնվելով Վենետիկի հանձնաժողովի «Ընտրական գործընթացներում լավագույն գործելակերպի կանոնագրքի» վրա՝ Դատարանը առիթ է ունեցել համարել, որ ազգային մարմինները դրսևորել են ավելորդ ձևապաշտպանություն, ինչը հանգեցրել է ընտրական ոլորտում իրավական պաշտպանության միջոցի մերժմանը: Այն հանգամանքը, որ թեկնածուների միջև կա ձայների մեծ տարբերություն կարևոր չէ, քանի որ հարկ է առանձին գնահատել խախտումների լրջությունն ու տարածումը նախքան ընտրության ընդհանուր արդյունքների վրա դրանց հետևանքների որոշումը («*Նամաթ Ալին ընդդեմ Ադրբեջանի*»):

Ուղեցույց թիվ 1 արձանագրության 3-րդ հոդվածի վերաբերյալ (ազատ ընտրությունների իրավունք)

Մեջբերվող գործերի ցանկեր

Սույն ուղեցույցում մեջբերվող նախադեպային իրավունքի շրջանակներում հղում է կատարվում Դատարանի կայացրած վճիռներին և որոշումներին, ինչպես նաև Մարդու իրավունքների եվրոպական հանձնաժողովի («Հանձնաժողով») որոշումներին և զեկույցներին:

Եթե գործի անվանումից հետո այլ նշում չի կատարվում, ապա մեջբերումը վերաբերում է Դատարանի որևէ պալատի կողմից ըստ էության կայացված վճիռին: Եթե բերվում է «(որոշ.)» նշումը, ապա այն հղում է կատարում Դատարանի որոշմանը, իսկ «[ՄՊ]» հապավումը նշանակում է, որ գործը քննվել է Մեծ պալատի կողմից:

Սույն թարմացված հրապարակման դրությամբ Կոնվենցիայի 44-րդ հոդվածի իմաստով պալատի ոչ վերջնական վճիռները ստորև բերված ցանկում նշված են աստղանիշով (*): Կոնվենցիայի 44-րդ հոդվածի 2-րդ մասը ձևակերպված է հետևյալ կերպ. «Պալատի վճիռը դառնում է վերջնական, եթե՝ ա. կողմերը հայտարարում են, որ չեն պահանջի գործի հանձնում Մեծ պալատին, կամ բ. վճռի կայացումից հետո երեք ամսվա ընթացքում չի պահանջվում գործի հանձնում Մեծ պալատին, կամ գ. Մեծ պալատի հանձնախումբը, 43-րդ հոդվածին համապատասխան, մերժում է գործը հանձնելու պահանջը»: Եթե Մեծ պալատի հանձնախումբն ընդունում է գործը հանձնելու պահանջը, ապա պալատի վճիռը դառնում է անվավեր, և Մեծ պալատը հետագայում պետք է ընդունի վերջնական վճիռ:

Ուղեցույցի էլեկտրոնային տարբերակում ներկայացված հղումներով մեջբերվում է «HUDOC» տվյալների շտեմարանը (<http://hudoc.echr.coe.int>), որտեղ կարելի է գտնել Դատարանի նախադեպային իրավունքը (Մեծ պալատի, պալատի և կոմիտեի վճիռներ և որոշումներ, հանձնված գործեր, Նախադեպային իրավունքի տեղեկագրից վերցված խորհրդատվական եզրակացություններ և իրավաբանական ամփոփագրեր), Հանձնաժողովի նախադեպային իրավունքը (որոշումներ և զեկույցներ), ինչպես նաև Նախարարների կոմիտեի բանաձևերը: Հանձնաժողովի առանձին որոշումներ բերված չեն «HUDOC» տվյալների շտեմարանում և առկա են միայն տպագիր տարբերակով՝ Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի տարեկան տեղեկագրի համապատասխան հատորում:

Դատարանն իր վճիռներն ու որոշումները կայացնում է անգլերենով և (կամ) ֆրանսերենով, որոնք Դատարանի երկու պաշտոնական լեզուներն են: «HUDOC» տվյալների շտեմարանում կարելի է գտնել նաև Դատարանի որոշ հիմնական գործերի թարգմանությունները՝ ավելի քան երեսուն ոչ պաշտոնական լեզուներով: Բացի այդ, շտեմարանում բերված են հղումներ նախադեպային իրավունքի մոտ հարյուր առցանց տեղեկագրի, որոնք պատրաստվել են երրորդ անձանց կողմից:

Ուղեցույց թիվ 1 արձանագրության 3-րդ հոդվածի վերաբերյալ (ազատ ընտրությունների իրավունք)

—Ա—

- Ադամտոնս ընդդեմ Լատվիայի*, թիվ 3669/03, 24 հունիսի 2008թ.
Ազիզն ընդդեմ Կիպրոսի, թիվ 69949/01, ՄԻԵԴ 2004-V
Ալայոս Քիսսն ընդդեմ Հունգարիայի, թիվ 38832/06, 20 մայիսի 2010թ.
Ալբանեզեն ընդդեմ Իտալիայի, թիվ 77924/01, 23 մարտի 2006թ.
Ահմեդ և այլք ընդդեմ Միացյալ Թագավորության, 2 սեպտեմբերի 1998թ., *Վճիռների և որոշումների ժողովածու* 1998-VI
Անչուզովը և Գլադկովն ընդդեմ Ռուսաստանի, թիվ 11157/04 և թիվ 15162/05, 4 հուլիսի 2013թ.
Անտոնենկոն ընդդեմ Ռուսաստանի (որոշ.), թիվ 42482/02, 23 մայիսի 2006թ.
Ասենսիո Սերկեդան ընդդեմ Իսպանիայի, թիվ 23151/94, Հանձնաժողովի որոշում, 9 մայիսի 1994թ., Ո.Ձ., թիվ 77-A, էջ 122

—Բ—

- Բարենկոն ընդդեմ Ուկրաինայի* (որոշ.), թիվ 43476/98, 4 մայիսի 1999թ.
Բասկերի ազգայնական կուսակցությունը՝ Իսպառլդեի տարածաշրջանային կազմակերպությունն ընդդեմ Ֆրանսիայի, թիվ 71251/01, ՄԻԵԴ, 2007-II
Բարեփոխված պետական կուսակցությունն ընդդեմ Նիդեռլանդների (որոշ.), թիվ 58369/10, 10 հուլիսի 2012
Բենկարտրն ընդդեմ Ֆրանսիայի (որոշ.), թիվ 51685/99, 10 նոյեմբերի 2003թ.
Բոմբարդն ընդդեմ Ֆրանսիայի (որոշ.), թիվ 44081/02, ՄԻԵԴ 2006-IV
Բոշկոսկին ընդդեմ նախկին Հարավսլավիայի Մակեդոնիայի Հանրապետության (որոշ.), թիվ 11676/04, ՄԻԵԴ 2004-VI
Բոումանն ընդդեմ Միացյալ Թագավորության, 19 փետրվարի 1998թ., *Վճիռների և որոշումների ժողովածու* 1998-I
Բրիտո Դա Սիլվա Գուեռան և Սոսա Մազոնն ընդդեմ Պորտուգալիայի (որոշ.), թիվ 26712/06 և թիվ 26720/06, 17 հունիսի 2008թ.
Բրիքեն ընդդեմ Լատվիայի (որոշ.), թիվ 47135/99, 29 հուլիսի 2000թ.

—Գ—

- Գերագույն խորհրդի պատգամավորական ակումբն ընդդեմ Հայաստանի* (որոշ.), թիվ 11721/04, 14 ապրիլի 2009թ.
Գիտոնասը և այլք ընդդեմ Հունաստանի, 1 հունիսի 1997թ., *Վճիռների և որոշումների ժողովածու* 1997-IV
Գրինսը և Մ.Թ. -ն ընդդեմ Միացյալ Թագավորության, թիվ 60041/08 և թիվ 60054/08, ՄԻԵԴ, 2010թ.ս
Գրոսարուն ընդդեմ Ռումինիայի, թիվ 78039/01, ՄԻԵԴ, 2010թ.

—Դ—

- Դավիդովը և այլք ընդդեմ Ռուսաստանի*, թիվ 75947/11, ՄԻԵԴ, 2017թ.
Դիմիտրասը և այլք ընդդեմ Հունաստանի (որոշ.), թիվ 59573/10 և թիվ 65211/09, 4 հուլիսի 2017թ.
Դիքլեն և Սադակն ընդդեմ Թուրքիայի, թիվ 48621/07, 16 հուլիսի 2015թ.
Դյուպրենն ընդդեմ Ֆրանսիայի (որոշ.), թիվ 77032/12, 3 մայիսի 2016թ.
Դոլլն ընդդեմ Միացյալ Թագավորության (որոշ.), թիվ 30158/06, 6 փետրվարի 2007թ.

Դունը և այլք ընդդեմ Միացյալ Թագավորության (որոշ.), թիվ 566/10 և 130, 13 մայիսի 2014թ.

—Զ—

Ջորնիչն ընդդեմ Բոսնիա և Հերցեգովինայի, թիվ 3681/06, 15 հուլիսի 2014թ.

—Է—

Էկոզլասսոստն ընդդեմ Բուլղարիայի, թիվ 30386/05, 6 նոյեմբերի 2012թ.

Էտքսեբերրիան և այլք ընդդեմ Բսպանիայի, թիվ 35579/03 և 3 այլ գործ, 30 հուլիսի 2009թ.

—Թ—

Թահիրովն ընդդեմ Ադրբեջանի, թիվ 31953/11, 11 հունիսի 2015թ.

Թիմկեն ընդդեմ Գերմանիայի, թիվ 27311/95, Հանձնաժողովի որոշում, 11 սեպտեմբերի 1995թ., Ո.Ձ., թիվ 82-B, էջ 158

«Թիվի վեստ ԱՄ» և Ռուզլանի կենսաթոշակային կուսակցությունն ընդդեմ Նորվեգիայի, թիվ 21132/05, ՄԻԵԴ, 2008

Թուրքիայի միավորված կոմունիստական կուսակցությունը և այլք ընդդեմ Թուրքիայի, 30 հունվարի 1998թ., Վճիռների և որոշումների ժողովածու 1998-I

—Ժ—

Շդանոկան ընդդեմ Լատվիայի [ՄՊ], թիվ 58278/00, ՄԻԵԴ, 2006-IV

Շողովրդահանրապետական կուսակցությունն ընդդեմ Թուրքիայի, թիվ 19920/13, ՄԻԵԴ, 2016թ.

—Ի—

Ի.Զ-ն ընդդեմ Հունաստանի, թիվ 18997/91, Հանձնաժողովի որոշում, 28 փետրվարի 1994, Ո.Ձ., թիվ 76-B, էջ 65

Իքս-ը և այլք ընդդեմ Բելգիայի, թիվ 6837/74, Հանձնաժողովի որոշում, 2 հոկտեմբերի 1975թ., Ո.Ձ., 3, p. 135

Իքս-ն ընդդեմ Գերմանիայի, թիվ 2728/66, Հանձնաժողովի որոշում, 6 հոկտեմբերի 1967թ., Ժողովածու 25, էջեր 38-41

Իքս-ն ընդդեմ Միացյալ Թագավորության, թիվ 7140/75, Հանձնաժողովի որոշում, 6 հոկտեմբերի 1976թ., Ո.Ձ., 7, էջ 97

Իքս-ն ընդդեմ Միացյալ Թագավորության, թիվ 7566/76, Հանձնաժողովի որոշում, 11 դեկտեմբերի 1976թ., Ո.Ձ., 9, էջ 123

Իքս-ն ընդդեմ Միացյալ Թագավորության, թիվ 7730/76, Հանձնաժողովի որոշում, 28 փետրվարի 1979թ., Ո.Ձ., 15, էջ 140

Իքս-ն ընդդեմ Միացյալ Թագավորության, թիվ 8873/80, Հանձնաժողովի որոշում, 13 մայիսի 1982թ., Ո.Ձ., 28, էջ 106

—Լ—

Լարիտան ընդդեմ Իտալիայի [ՄՊ], թիվ 26772/95, ՄԻԵԴ, 2000-IV

Լիկուրեզոսն ընդդեմ Հունաստանի, թիվ 33554/03, ՄԻԵԴ, 2006-VIII

Լինկովն ընդդեմ Չեխական Հանրապետության, թիվ 10504/03, 7 դեկտեմբերի 2006թ.

Լուրջն ընդդեմ Գերմանիայի, թիվ 35385/97, Հանձնաժողովի որոշում, 21 մայիսի 1997թ.

—Խ—

—Կ—

Կանարյան կղզիների ազգայնական դաշնությունն ընդդեմ Բսպանիայի (որոշ.), թիվ 56618/00, ՄԻԵԴ, 2001-VI

Կավաքչին ընդդեմ Թուրքիայի, թիվ 71907/01, 5 ապրիլի 2007թ.

Կովաչն ընդդեմ Ուկրաինայի, թիվ 39424/02, ՄԻԵԴ, 2008

Կրասնովը և Սկուրատովն ընդդեմ Ռուսաստանի, թիվ 17864/04 և թիվ 21396/04, 19 հուլիսի 2007թ.

—Հ—

Հիլբեն ընդդեմ Լիխտենշտեյնի (որոշ.), թիվ 31981/96, ՄԻԵԴ, 1999-VI

Հիրսթն ընդդեմ Միացյալ Թագավորության (թիվ 2) [ՄՊ], թիվ 74025/01, ՄԻԵԴ, 2005-IX

—Մ—

Մ.-ն ընդդեմ Միացյալ Թագավորության, թիվ 10316/83, Հանձնաժողովի որոշում, 7 մարտի 1984, Ո.Ձ., 37, էջ 135

Մաթյո-Մոհինը և Քլերֆայթն ընդդեմ Բելգիայի, 2 մարտի 1987թ., սերիա Ա թիվ 113

Մալարդն ընդդեմ Ֆրանսիայի (որոշ.), թիվ 46813/99, 5 սեպտեմբերի 2000թ.

Մեթյունն ընդդեմ Միացյալ Թագավորության [ՄՊ], թիվ 24833/94, ՄԻԵԴ 1999-I

Մելնիչենկոն ընդդեմ Ուկրաինայի, թիվ 17707/02, ՄԻԵԴ, 2004-X

Միհաելա Միհայ Նեագուն ընդդեմ Ռումինիայի (որոշ.), թիվ 66345/09, 6 մարտի 1994թ.

Մուկանն ընդդեմ Լեհաստանի (որոշ.), թիվ 56550/00, ՄԻԵԴ, 2006-IV

Մուհան և Գիլլոն ընդդեմ Միացյալ Թագավորության (որոշ.), թիվ 22962/15 և թիվ 23345/15, 13 հունիսի 2017թ.

—Յ—

Յումակը և Սադակն ընդդեմ Թուրքիայի [ՄՊ], թիվ 10226/03, ՄԻԵԴ, 2008

—Ն—

Նամաթ Ալինն ընդդեմ Ադրբեջանի, թիվ 18705/06, 8 ապրիլի 2010թ.

«Նոր դեմոկրատներ» կուսակցությունը և «Մեր հող» կուսակցությունն ընդդեմ Լատվիայի (որոշ.), թիվ 10547/07 և թիվ 34049/07, 29 նոյեմբերի 2007թ.

—Շ—

Շինդլերն ընդդեմ Միացյալ Թագավորության, թիվ 19840/09, 7 մայիսի 2013թ.

Շտրակը և Ռիխտերն ընդդեմ Գերմանիայի (որոշ.), թիվ 28811/12 և թիվ 50303/12, 5 հուլիսի 2016թ.

—Ու —

Ուսպակիչն ընդդեմ Լիտվայի, թիվ 14737/08, 20 դեկտեմբերի 2016թ.

—Պ—

Պաշալիդիսը, Կուսմերիդիսը և Ջահարկիսն ընդդեմ Հունաստանի, թիվ 27863/05 և 2 այլ գործեր, 10 ապրիլի 2008թ.
Պաունովիչը և Միլիվոզևիչն ընդդեմ Սերբիայի, թիվ 41683/06, 24 մայիսի 2016թ.
Պաքսասն ընդդեմ Լիտվայի [ՄՊ], թիվ 34932/04, ՄԻԵԴ, 2011թ.
Պետկովը և այլք ընդդեմ Բուլղարիայի, թիվ 77568/01 և 2 այլ գործեր, 11 հունիսի 2009թ.
Պիեռ-Բոլդան ընդդեմ Ֆրանսիայի, թիվ 24194/94, 21 հոկտեմբերի 1997թ.
Պին ընդդեմ Ֆրանսիայի, թիվ 66289/01, ՄԻԵԴ, 2005-I
Պոդկոլզինան ընդդեմ Լատվիայի, թիվ 46726/99, ՄԻԵԴ, 2002-II
Պոլակոն և Գարաֆոլոն ընդդեմ Իտալիայի, թիվ 23450/94, Հանձնաժողովի որոշում, 15 սեպտեմբերի 1997թ., Ո.Ձ., թիվ 90-B, էջ 5

—Ռ—

Ռեֆա Պարտիսի (Բարեկեցության կուսակցություն) և այլք ընդդեմ Թուրքիայի [ՄՊ], թիվ 41340/98 և 3 այլ գործեր, ՄԻԵԴ, 2003-II
Ռիզան և այլք ընդդեմ Բուլղարիայի, թիվ 48555/10 և թիվ 48377/10, 13 հոկտեմբերի 2015թ.
Ռուսական պահպանողական գործարարների կուսակցությունը և այլք ընդդեմ Ռուսաստանի, թիվ 55066/00 և թիվ 55638/00, 11 հունվարի 2007թ.
Ռուսաստանի կոմունիստական կուսակցությունը և այլք ընդդեմ Ռուսաստանի, թիվ 29400/05, 19 հունիսի 2012թ.

—Ս—

Սադակը և այլք ընդդեմ Թուրքիայի (թիվ 2), թիվ 25144/94 և 8 այլ գործեր, ՄԻԵԴ, 2002-IV
Սայերաս Յինարեան ընդդեմ Բուլղարիայի (որոշ.), թիվ 52226/99, ՄԻԵԴ, 2000-XI
Սեյդիչը և Ֆինչին ընդդեմ Բոսնիա և Հերցեգովինայի [ՄՊ], թիվ 27996/06 և թիվ 34836/06, ՄԻԵԴ, 2009
Սեյդիզադեն ընդդեմ Ադրբեջանի, թիվ 37700/05, 3 դեկտեմբերի 2009թ.
*Սերնեան ընդդեմ Ռումինիայի**, թիվ 43609/10, 27 փետրվարի 2018թ.
Սևվինգերն ընդդեմ Նիդերլանդների (որոշ.), թիվ 17173/07 և թիվ 17180/07, 6 սեպտեմբերի 2007թ.
Սիտարոպուլոսը և Գիակոմոփոլոսն ընդդեմ Հունաստանի [ՄՊ], թիվ 42202/07, ՄԻԵԴ, 2012
Սկոպոլան ընդդեմ Իտալիայի (թիվ 3) [ՄՊ], թիվ 126/05, 22 մայիսի 2012թ.
Սոբաջին ընդդեմ Թուրքիայի, թիվ 26733/02, 29 նոյեմբերի 2007թ.
Սոյլերն ընդդեմ Թուրքիայի, թիվ 29411/07, 17 սեպտեմբերի 2013թ.
Սոցիալիստական կուսակցությունը և այլք ընդդեմ Թուրքիայի, 25 մայիսի 1998թ., Վճիռների և որոշումների ժողովածու 1998-III
Սուխովեցկին ընդդեմ Ուկրաինայի, թիվ 13716/02, ՄԻԵԴ, 2006-VI

—Վ—

Վիտո Սանտե Սանտորոն ընդդեմ Իտալիայի, թիվ 36681/97, ՄԻԵԴ, 2004-VI
Վիտրենկոն և այլք ընդդեմ Ուկրաինայի, թիվ 23510/02, 16 դեկտեմբերի 2008թ.
Վրաստանի աշխատավոր կուսակցությունն ընդդեմ Վրաստանի, թիվ 9103/04, ՄԻԵԴ, 2008

—Տ—

Տանասեն ընդդեմ Մոլդովայի [ՄՊ], թիվ 7/08, ՄԻԵԴ 2010

—Ք—

Քերիվլին և Ալիբեյլին ընդդեմ Ադրբեջանի, թիվ 18475/06 և թիվ 22444/06, 10 հունվարի 2012թ.

Քերիմովան ընդդեմ Ադրբեջանի, թիվ 20799/06, 30 սեպտեմբերի 2010թ.

Քսերեբն ընդդեմ Մալթայի, թիվ 52492/99, 15 հունիսի 2000թ.

—Օ—

Օկետոն ընդդեմ Բտալիայի (որոշ.), թիվ 14507/07, 12 նոյեմբերի 2013թ.

Օրանն ընդդեմ Թուրքիայի, թիվ 28881/07 և 37920/07, 15 ապրիլի 2014թ.

—Ֆ—

Ֆրիզների կուսակցությունն ընդդեմ Գերմանիայի, թիվ 65480/10, 28 հունվարի 2016թ.

Ֆրոզլն ընդդեմ Ավստրիայի, թիվ 20201/04, 8 ապրիլի 2010թ.